

Ռոմիկ Խ. Քոչարյան  
Փիլիսոփ. գիյր. թեկնածու

## ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԿՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Մաս 2. Պատմությունը՝ մտածողության առ իսկություն ու  
իմաստություն ընթացքի ներկայակցություն\*

**Բանալի բառեր** – պատմություն, պատմագիտական հա-  
յեցակարգ, պատմափիլիսոփայություն, հերմենևտիկա, մեկ-  
նություն, իսկություն:

16. Պատմությունն իր իսկական գոյության պարագայում և կոնկրետորեն Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկը իրենում և–կամ իրենով պատմվող բովանդակությամբ և պատմումի կերպով կարող է կրթել և հենց կրթում ու աճեցնում է մարդկային հավատը, հույսն ու սերն առ Աստված, նաև սերը մարդկանց նկատմամբ և միտքն առ իմաստություն:

Ըստ Մովսես Խորենացու պատմական երկի նպատակային հղացքի և հենց պատմաիմաստասիրական հայեցակարգի՝ պատմությունն իր **նախընտրելի գոյության** պարագայում կարող է լինել կրթական և հենց կրթական է մարդկային մտքի, խոսքի, գործի և բովանդակ կենսակերպի համար և որպես այդպիսին է «ընթերցասէր» և «ուսումնասէր» յուրաքանչյուրի, ինչպես նաև զանազանակերպ մերձավորությամբ, համագոյակցությամբ ու համախմբությամբ ամենքի և՛ դիտավորության, և՛ կերպառության, և՛ կատարումի բովանդակ խնդրակարգում:

Հայտնի է, որ **գեղարվեստական գրականությունը կրթում է զգացմունքները, ապրումները և այսպես՝ հենց հոգին:** Գեղարվեստական գրականության մեջ պատմվում և–կամ ասման է բերվում ու ներկայանում «երկի աշխարհի» եղելումը: Ըստ Արիստոտելի՝ «պոետի խնդիրն է՝ խոսել ոչ իրական պատահումի մասին, այլ՝ թե ինչ կարող է պատահել, հետևաբար՝ այն մասին, ինչ հնարավոր է ըստ հավանականության կամ ըստ անհրաժեշտության: Պատմիչը և պոետը հենց տարբերվում են միմյանցից նրանով, որ առաջինը խոսում է իրական պատահումի, իսկ երկրորդը՝ այն

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 25.05.2016: Սկիզբը՝ «Վէմ», 2016, N 1, էջ 110–137:

մասին, ինչը կարող է պատահել»<sup>1</sup>: Արիստոտելը սրանից եզրակացնում է. «Պոեզիան այս պատճառով ավելի փիլիսոփայական ու լուրջ է, քան պատմությունը, քանզի պոեզիան առավելապես խոսում է ընդհանուրի մասին, պատմությունը՝ եզակիի»<sup>2</sup>: Եվ, պարզաբանելով, նաև հիմնավորում է իր եզրակացությունը՝ ասելով. «Ընդհանուրն այն է, ինչն ըստ անհրաժեշտության կամ հավանականության այսինչի (անձի և իրի բնության նկարագրի)՝ պատշաճ է խոսել կամ անել այս-այն, ինչին և ձգտում է պոեզիան, տալով անուններ, իսկ եզակին, օրինակ, ինչ արեց Ալկիվիադը կամ ինչ պատահեց նրան»<sup>3</sup>:

Պոեզիայի և պատմության փոխտարբերակվող կոչումի ու իսկության բացորոշմանն է ուղղորդված Արիստոտելի այն միտքը, որ պոեզիան գործ ունի ըստ անհրաժեշտության կամ հավանականության **հնարավոր** եղելու մի, իսկ պատմությունը՝ **իրական** եղելու մի հետ: Ըստ իս՝ կարելի է հասկանալ Արիստոտելի եզրակացությունն ու պատճառաբանությունը և, այնուամենայնիվ, չհամաձայնել ըստ ամենայնի ու անվերապահ՝ պոեզիայում ասվողի՝ առավել ընդհանուր և պատմության մեջ ասվողի՝ եզակի բնույթի, ուստի և պոեզիայի՝ առավել և պատմության՝ նվազ փիլիսոփայական լինելու վերաբերյալ այս մտքին: Ոչ բոլոր պատմություններն են, որ, ասման բերելով կյանքի եղելու մի և նրանում՝ իրադարձությունների ու գործերի իսկություն, կողմնորոշված ու սպառված են՝ լոկ եզակի իմաստ, վերաբերություն և հենց նշանակալիություն բացահայտելով:

Պոեզիայի ու պատմության գոյության կոչումի և իսկությունը հայտող իմաստության խորհրդի խնդրակարգում հասկացման ձգտող խորհրդածության ու մեկնողաբար բացորոշմանն ուղղված մտորումներում կարելի է ու հարկ է ամրագրել, որ գեղարվեստական տեքստը **ապրված էականի** արտահայտությունն է և անմիջականորեն չի վերաբերում արտաքին աշխարհին, այլ ուղղակիորեն կերպագործում է «երկի աշխարհը» և, որ ամենակարևորն է, մարդկային ինքնության ու կյանքի էականորեն նշանակալի դիտվող ու ներապրվող եղելու մի՝ այդ նշանակալիությամբ իսկ խորհուրդ հայտող իմաստի հյուսումն է՝ հնարածո, խորհրդանշանային իր կերպավորմամբ: Տեքստի և-կամ տեքստով բուն ասումը, որ հյուսյալ է ներքին ու արտաքին կյանքի՝ երկուստեք իրական կամ հնարավոր եղելու մից **ապրված էականի անկեղծ խոստովանությամբ**, ուղղակիորեն վերաբերելով ու նկարագրելով՝ պատումակերպելով ու ներկայացնելով հնարովի ու խորհրդանշանային «երկի աշխարհը», ինչպես և նշում է «տեքստի ֆենոմենոլոգիական հերմենևտիկայի» իր հայեցակարգում Պ. Ռիկյորը՝ տեքստի չորս առանձնահատկությունների իր բացորոշման մեջ, ամենևին էլ ուղղակի և-կամ մատնանշական (ostensive) վերաբերության հարաբերությամբ չէ արտաքին ու իրական աշխարհին, որում և՛ իրական կյանքի եղելումին<sup>4</sup>: Վերաբերության հնարավորություն և-կամ ձշմարիտ եղելու-

1 **Аристотель.** Сочинения. М., 1984, 4, с. 655. Փոքր-ինչ ձշգրտումների առումով տե՛ս նաև **Аристотель,** Риторика. “Поэтика”. М., 2000, с. 157.

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

4 Տե՛ս **Ricoeur P.** The model of the text: meaningful action considered as a text // **Ricoeur P.** Hermeneutics and the human Sciences. Cambridge, 1982, p. 198–203, **Քոչարյան Ռ.,** Բանախոսության և տեքս-

թյուն պետք է որոնել ու հայտնաբերել միայն **«երկի աշխարհի» եղելումի այլաբանությամբ՝ ընթերցասերի հասկացման սիրուն մատուցվող ու նաև մատչելի իսկության առումով՝ որպես հենց իրական կյանքի եղելումի իսկություն** և-կամ **իսկության կայացման հնարավորություն**:

Այստեղ ու հիմա հարկ է հստակ ամրագրել, որ, ի համեմատ գեղարվեստական գրականության և նրանում **գեղարվեստական պատմողության**, վերոնշյալ կրթությունն առավել չափով ու իր բոլորատեսակ հնարավորություններով, այն է՝ առ Աստված հավատի, հույսի, սիրո ու մարդասիրության, որին և հենացյալ՝ մտքի ու բովանդակ կենսակերպի առ իմաստություն կրթությունը, իրագործում է պատմությունը: Քանզի պատմությունն այդ ամենը գիտակցում է որպես իր «անելիք», որը և իրագործում է կամային ու բանականորեն կազմակերպված ուղղորդվածությամբ, այն է՝ դիտավորությամբ, կերպարանումով ու կատարումով: Եվ այդ ամենը պատմությունն իրագործում է հենց **ներքին ու արտաքին և երկուստեք իրական կյանքի՝ ի բարին նշանակալի եղելումի իսկությունը հայտող իմաստը** հասկանալով ու պատումակերպ հյուսելով իրենում և այդ իմաստում ներկա ու այն՝ որպես այդպիսին, պատմարժան իմաստ, կայացնող **իմաստության խորհուրդը** մեկնողաբար բացորոշելով, իրենում և-կամ իրենով արտահայտելով ու «յանդիման կացուցանելով» ընթերցասեր անձի հասկացման սիրով և «ուշ»-ով արթնացյալ «աչաց մտաց»: Իսկ գեղարվեստական գրականությունը այդ կրթականությունն իրագործում է իր խորհրդանշանային կերպավորության մեջ զուտ **հնարովի կյանքի բարենշանակ եղելումի իմաստը** իրենում և-կամ իրենով ներկայացնելով (ներքուստ կայացնելով): Եվ հարկ է ասել, որ գեղարվեստական գրականության մեջ հնարածո կյանքի եղելումի **ներկայացումն** իր խորհրդանշանային կերպառությամբ կարող է լինել գուցե՝ լիովին, գուցե՝ մասամբ, գուցե ոչ ամեննևին իրական, գուցե միայն հնարավոր կյանքի իսկություն հայտող իր իմաստով և-կամ իմաստության խորհրդով, և ուրեմն կարող է լինել նաև հեղինակ անձի զուտ հետաքրքրություն և ոչ ամեննևին և ոչ հաճախ **բարենշանակ՝ կրթականության առումով, հատուկ դիտավորություն, կերպարանում ու կատարում, ինչպես որ այն իր անհրաժեշտությամբ ու նաև նախընտրելիությամբ և ամենայն իրաց պարագայում՝ «մարդասիրության» ու, ըստ այդմ, «արդարության» հոգևոր զգացմունքի ու իդեայի մտահայեցմանն և կենագործմանը հետամուտ հոժարակամությամբ ու ազատությամբ կարող էր լինել պատմության մեջ, մշակությամբ, հումանիտար կամ սոցիալական գիտություններում:**

Կարելի է ասել նաև ավելին. պատմությունը այնպես, ինչպես այն ներկայանում է Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկում ու պատմագիտական հայեցակարգում, նույնիսկ գեղարվեստական և-կամ հնարածո ու առասպելական գրականության միջոցով իրագործվող այդ կրթությունն է շտկում, ձշմարտում և նույնորեն կատարումի հասցնում՝ ի կատարելություն հավատի, հույսի, սիրո, ինչպես նաև առաքինությամբ կարգավոր ու հենց բարեկարգ՝ խոհեմ ու պարկեշտ զգացմունքի ու ապրումի, մտքի,

տի առանձնահատկությունները Պ. Ռիկյորի «տեքստի ֆենոմենոլոգիական հերմենևտիկայի» հայեցակարգում // Փիլիսոփայությունը արդի աշխարհում, Գիտաժողովի նյութեր, եր., 2013, էջ 196-197:

խոսքի ու գործի և բովանդակ կյանքի: Ըստ Խորենացու պատմագիտական հայեցակարգի՝ **պատմությունն իր իսկական գոյության պարագայում ճշմարտում ու լրումի է բերում նաև գեղարվեստական ու նաև առասպելական գրականության կրթականությունը և նրանով ներկրթային անդրադարձում բուն մարդկային ինքնությանն ու կյանքին և ոչ այլևս ինքնության ու կյանքի պատրանքին:** Ի հավելումն ասացյալի՝ հարկ է նաև ամրագրել, որ գեղարվեստական գրականությամբ մանկուց կրթվում են ամենքը և նրա բուն կոչումը և, ըստ այդմ, կատարումի իսկությունը, այն է՝ մարդկային կյանքի ու բովանդակ կենսակերպի էականորեն նշանակալիի ներքնական հասկացումն ու բարենշանակ հնարավորությունների խորհրդանշանակորեն բացահայտումը, ըստ էության, «երկի աշխարհի» ու նրանում հնարածո կյանքի համար չէ, այլ՝ հենց **իրական մարդկային ու նաև մշակութային ինքնության և կյանքի ներկա ու ապագա լինելության**, ի սպաս որին իր **պատմողության վարդապետական եղանակի** ոչ սոսկ գեղարվեստական, այլ հենց իսկորեն **գիտական արվեստավորությամբ և պատմվող բովանդակությամբ՝ իսկության ու իմաստության խորհրդի հասկացմանն ու մեկնորոշմանն** ուղղված իր դիտավորությունը և, ըստ այդմ՝ **կեպարանումն ու բուն կատարումն է իմանալի դարձնում Մովսես Խորենացին իր երկում ու դրանում բովանդակյալ իր պատմագիտական հայեցակարգում:**

17. **Ընդհանրապես՝ ողջ մշակույթը և կոնկրետորեն մշակութային տեքստերն ու հենց պատմությունը ապրված, մրածված, էականի արտահայտություններ են և, որպես այդպիսին՝ օժտված լինելով մարդկանց, սերունդներին և հենց մեզ պիտանի ու օգտակար ասելիք հաղորդելու կարողությամբ, կոչում են մեզ ունկնդրության և հասկացման:** Ըստ Մովսես Խորենացու՝ պատմությունը և կոնկրետորեն հայոց պատմությունը իր կոչմանը համապատասխան լինելության և ուրեմն իր իսկական գոյության կարգում պատմում է բովանդակ կյանքի և կոնկրետորեն հայոց կյանքի մշակութորեն նշանակալի եղելումի իսկությունը հայտող իմաստը, ընդամին, իրենում կազմակերպելով պատմվող այդ իսկության ի հայտ և ի ներկայություն գալը հնարավորող ու ապահովող իր պատմումի կամ պատմողության **կերպ**, նաև ակնկալելով ու սիրո հորդորով կյանքի կոչելով **որոշակի պայմաններ:** Այդ ինչ պատմումի կերպի ու պայմանների մասին է խոսքը, որոնց դեպքում միայն հնարավորվում ու ապահովվում է **իսկության գոյությունն ընթերցողին՝** իսկության ներկայությունը մարդկային ինքնությանը:

Հարկ է նկատի ունենալ, որ պատմությամբ ասման բերվող իսկության ի հայտ ու ի ներկայություն գալն ընթերցողին հնարավորող ու ապահովող առաջնահերթորեն անհրաժեշտ ու նախընտրելիորեն պիտոյական գործոնը հենց **տեքստի բացությունն է** ընթերցողի նկատմամբ: Իսկ դրն է և որպիսին է պատմումի այն կերպը, որ և ներկայանում է որպես տեքստի բացություն ընթերցողին: Պատմումի կամ պատմողության այն կերպը, որ և ներկայանում է որպես տեքստի բացություն, հենց **մեկնողությունն է:** Պատմությունն իր պատմումը կազմակերպում է (պետք է կազմակերպի) առաջնահերթորեն՝ **իրենում և-կամ իրենով պատմվող ու ներկայության**

**կոչվող իսկությանն ու իմաստության խորհուրդին համապատասխան մեկնողությամբ, որով և հնարավորում ու ապահովում է իսկության գոյությունն ու հենց ներկայությունն ընթերցողին:** Պատմությունն իր պատմումը կազմակերպում է ասման բերվող իսկությանն ու իմաստության խորհուրդին՝ այլոց հասկացման ձգտմանն ու սիրուն և հենց սիրով իմաստնացյալ մտքին, որով և՛ անհրաժեշտ ու նախընտրելի բացության ու հասկացման կարողությանը, սկզբունքորեն մատչելիության և-կամ հաղորդակցականության հնարավորություն ընձեռող **մեկնողությամբ:**

Իսկության գոյությունը և հենց ներկայությունը ընթերցողին հնարավորող ու ապահովող սկզբունքային ու առաջնային գործոնի՝ ընթերցողի նկատմամբ տեքստի նախընտրելի բացության հետ մեկտեղ, անհրաժեշտ պայման է՝ տեքստում ասվողի նկատմամբ ընթերցողի **աղեկվատ ու նաև նախընտրելի համաբացությունն ու հասողությունը** (разумение): Մարդը՝ որպես այդպիսին, սկզբունքորեն ունի և ուրեմն ընթերցող անձինք ունեն պատմությամբ, տեքստամշակույթով և, ընդհանրապես, ողջ մշակույթով փոխանցվող **մտածված, ապրված էականը** և, այսկերպ, **պիտանին ու օգտակարն** ընկալելու կարողությունը, և խնդիրն այսպիսով հետևյալն է. բացված է, արդյոք, ընթերցողը մշակույթով կամ կոնկրետորեն տեքստով հաղորդվող իմաստի ընկալման համար, աղեկված է արդյոք նրա բացությունը **մշակույթի կամ տեքստի՝ առ «ընթերցող»** բացության նկատմամբ, թե՛ անհամապատասխան և-կամ փակ: Արդյոք անհրաժեշտ չէ՞ «ընթերցողին» և ուրեմն նաև մեզ որոշակի **ինքնակազմակերպում**, երբ ինքներս մեզ կկազմակերպենք հաղորդվող իմաստին համապատասխան **ընկալողական բացվածքով**, այլ ոչ թե մնալով անպատրաստ՝ հաղորդվողը կձևենք ինքնակամությամբ և սոսկ կամայականորեն՝ ընկալման արդյունքում ինքներս չփոխվելով ու չիմաստնանալով, այլ՝ մնալով ինքներս մեր սահմաններում, այնպիսին, ինչպիսին կայինք նաև մինչև հասկանալը, որովհետև հաղորդվողի տեսադաշտը չպահպանելով՝ չընկալեցինք բացվող նշանակությունը **«աշխարհում մարդկային ինքնության և հենց մեր գոյության»** (որում և մեր ինքնության ու կենսակերպի) **ընտրության ու կատարումի** առումով հնարավոր **առավել բարի կարգավորության ու նորահայտության** մեջ, որպես մեզ համար **նոր ու այլ և հենց առավել բարեկարգ**, ինչը կարող էր վերափոխել մեզ դեպի առավել առաքինի և մարդու կոչմանը համապատասխան, այսու՝ մարդուն իսկորեն **առինքնող** կեցողություն: Հարկ է ամրագրել, որ երբ ասվում է **«իսկության գոյությունն ընթերցողին»**, որպես այդպիսին պետք է հասկանալ՝ **իսկության՝ ընթերցողին ի ներկայություն կայանալը և այդկերպ՝ կատարումի գալը հենց ընթերցողի մասնակցությամբ՝ բացությամբ ու հասկացմամբ:**

Ինչպես և կարելի է ուսանել Հ.-Գ. Գադամերի փիլիսոփայական հերմենևտիկայի հայեցակարգից և աստ՝ պատմության մեջ հասկացման ու մեկնության ներհյուսվածության հերմենևտիկական խնդրակարգի առնչությամբ որպես մտքի բանաձև ամրագրել, **իսկության գոյությունն ընթերցողին հնարավորվելով ու ապահովվելով ընթերցողի բացության, հասկացման սիրո ու ջանքի մասնակցությամբ, կատարումի է բերում**

**Իսկության ներկայությունը ընթերցողին՝ մտքին, հոգուն ու կյանքին:**

Ի մի բերելով վերոասացյալը՝ կարելի է նաև ամրագրել, որ, ըստ Մովսես Խորենացու, պատմության հասկացման համար անհրաժեշտ ու նախընտրելիորեն պիտոյական այս երկու գործոնները նկատի ունեցող պատմողությամբ հյուսված **ճշմարիտ ու նախընտրելի պատմությունը՝ իսկություն հայտող մեկնողությամբ ուղղաբանող ու այլաբանող մեկ-միասնական իր իմաստի ուղիղ դրվածքով ու լրիվությամբ, հղված է իր նախընտրելի ընթերցողին**<sup>5</sup>, ամենևին չներժելով նաև այդ նախընտրելի բացությանն ու հասկացմանը դեռ անպատրաստ կամ ոչ լիովին պատրաստ հնարավոր այլ ևս ընթերցողին:

18. Մարդկային անձի ինքնության կեցողությունն ու կենսաշխարհը և այլոց հետ համակեցությունն ի բարին կարգավորելու դիտավորությունը, կերպարանումը և կատարումը պատմության՝ ըստ իր կոչման ու իսկության և ուրեմն իսկական գոյության համար ունիվերսալ է: **Պատմությունները՝ որպես պատմված և-կամ պատմվող բովանդակություն, մշակութորեն նշանակալիի ասումներ են:** Դրա հետ մեկտեղ հարկ է նաև ամրագրել, որ պատմությունները ոչ միայն որպես պատմելիք ու պատմվող բովանդակություն, այլև՝ **որպես նաև պատմում, իրենց պատմողական կերպում ևս նշանակալի և-կամ մշակութորեն նշանակալի ասումներ են:**

Արդ կարելի է ամրագրել, որ **պատմությունը՝ որպես այդպիսին, իր սկզբունքային կոչմանը համապատասխան գոյությամբ և ուրեմն իր իսկական գոյության կերպում, իրենով և-կամ իրենում պատմվողի ու պատմումի միասնությամբ մշակութորեն նշանակալիի՝ աղեկվատ ու հենց նույնորեն նշանակալի կերպով ասում է:** Նկատենք նաև, որ պատմությունները ոչ միայն իրենց զուտ իսկական գոյության մեջ, այլև եղելական կոնկրետ դրսևորումներում իրենց մասամբ իսկական և մասամբ անիսկական գոյության միախառնության մեջ՝ նշանակալի ասումներ են, և կյանքի նշանակալի եղելումի համայնապատում և-կամ դրվագապատում այդ պատմություններում **ի պահ, ընթերցասեր և իմաստության ուսումնասեր սերունդներին հղվածությամբ ու ի հայտ բերվելու հնարավորությամբ ներկա են իմաստության խորհուրդներ:**

Մովսես Խորենացու պատմությանը բնորոշ է, և աստ հնարավորություն ունենք հակիրճ ընդհանրապես պատմության սեռի վերաբերյալ նույնպես ասել, որ պատմությունը՝ որպես այդպիսին, իր իսկության անհրաժեշտ պիտոյականությամբ ու նաև նախընտրելի գոյությամբ (և ուրեմն այդկերպ եղելականացած յուրաքանչյուր պատմություն) կարող է ներկայանալ և իր կոչմամբ, իրավամբ ու արդարությամբ հարկ է, որ սկզբունքորեն ներկայանա **մարդկային ինքնության ու կյանքի իսկություն ու իմաստության խորհուրդ պահող և հայտնելու հնարավորություն ընձեռող իր լինելությամբ:** Մարդկանց համար իսկ նախատեսված և իրենում խորհուրդ պահող իր բնությամբ ու գոյությամբ **պատմությունը իսկություն և նրա լրում որոնող է՝ ըստ մարդկային կարողության:** Ըստ այդմ՝ կազմա-

<sup>5</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Քոչարյան Ռ., Հերմենևտիկական իրադրությունը և «պատմության ընթերցողը» Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգում, «Գիտական հոդվածների ժողովածու», Եր., 2014, էջ 232-243:

կերպված ընթերցողի բացության նկատմամբ պատմությունը ցուցաբերում է նշանակություն: Պատմությունը, որպես մարդկային ինքնության, կյանքի ու մշակույթի նշանակալի եղելում և հենց կոնկրետ իրադարձություններ ու գործեր կերպացյալ **էություն ու հենց իսկություն**, անհրաժեշտորեն դառնում է հասկացման ու մեկնության ենթակա **բան-ա-կերպություն** և արդեն հասկացվող ու մեկնվող «բան»-ում՝ խորհուրդ ու իմաստություն: **Պատմությունը մարդկային ինքնության, կյանքի ու մշակույթի եղելումի իսկություն և խորհուրդ պահող ու հայտնելու կարողություն ունեցող իր լինելությամբ ընթերցողի նկատմամբ ցուցաբերում է նշանակություն և անհրաժեշտորեն դառնում հասկացման ու մեկնության թեմա:**

19. **Պատմությունն ինքն է կայանում որպես կյանքի եղելումի իսկության և խորհուրդի հասկացում ու մեկնություն:** Իր գոյակերպության իմաստային բնության առանձնահատկությամբ, այդ իմաստում իսկություն ու խորհուրդ պահող ու հայտնող իր էությամբ պատմությունը հենց ինքն է կայանում այնկերպ, որ իրենում անհրաժեշտորեն ու նաև նախընտրելիորեն ներհյուսված ունի հասկացման ու մեկնաբանության խնդրակարգը և ապա՝ որպես արդեն պատմական տեքստ ներկայանում է ընթերցողին՝ նույնաբար որպես հասկացման ու մեկնության ենթակա գոյավոր՝ **պատմվող բովանդակություն ու պատմում:**

Պատմության՝ որպես այդպիսին գոյության խնդրակարգում, մեկնաբանության ներհյուսվածության վերաբերյալ վկայությանն ենք առնչվում անգլիացի հայտնի պատմաբան Ռ. Քոլինգվուդի պատմագիտական հայեցակարգում: Պատմագիտության համար սկզբնաբար նշանակություն ունեցող պատմության հին հույների ըմբռնմանը հետևելով, ինչպես և բազմաթիվ այլ պատմիչներ ու պատմաբաններ, նա իր «Պատմության իդեան» աշխատության մեջ պատմությունը ոչ նրանց հետ նույնականությամբ, այլ՝ սկզբունքային ու էութենական իր նշանակությամբ հասկանում է որպես **հեկազոպոյություն**<sup>6</sup>՝ **մշակութային պատմական հետքերի փաստական տվյալները որպես մեկնակետ ունեցող որոնում, հետազոտության արդյունքում իրագործելով մշակութային այդ հետքերը թողած մարդկային ինքնության ու կենսակերպի որպիսությունը բացահայտող իմաստների գտանում:** «Գիտությունը որոնում է և այդ առումով՝ պատմությունը գիտություն է: ... Պատմությունը գիտություն է *res gestae*-ի վերաբերյալ, փորձ է՝ պատասխանելու անցյալում կատարված մարդկային գործողությունների վերաբերյալ հարցին»<sup>7</sup>: Եվ այդ հետազոտության կատարումն իրագործող մեթոդի առնչությամբ Ռ. Քոլինգվուդը գրում է. «Պատմությունը փաստական տվյալների (*evidence*) **մեկնաբանություն է**»<sup>8</sup> (ընդգծումը մերն է – Ռ. Ք.): Իսկ մի քանի տող ներքև նաև ավելացնում է. «...պատմաբանները կհամաձայնեն, որ պատմական ընթացակարգը կամ մեթոդը, ըստ էության, բովանդակվում է փաստական տվյալների

6 Տե՛ս **Коллингвуд Р.** Идея истории. Автобиография. М., 1980, с. 12, 19:

7 Նույն տեղում, էջ 13:

8 Նույն տեղում:

մեկնաբանության մեջ»<sup>9</sup>: Եվ, բնականաբար, որպեսզի ինչ-որ բան մեկնաբանվի, այն պետք է հասկացվի: Ինչպես տեսնում ենք, Ռ. Քոլինգվուդի պատմագիտական հայեցակարգում պատմության գոյության մեջ հերմենևտիկական խնդրակարգի ներկայությունը անհրաժեշտ ու նախընտրելի մեթոդի խնդիր է իսկության բացահայտման, որով և պատմության՝ որպես գիտություն գոյության ու կատարելագործման հարակայության:

Հայտնի միջնադարագետ և պատմության տեսաբան Մարկ Բլոկը, իր «Պատմության ջատագովություն» երկի ողջ շարադրանքում ընդհանրականացված տեսությամբ արտահայտվելով ամենայն հնարավոր պատմության վերաբերյալ, թե ինչպես է այն՝ որպես այդպիսին, **գոյանում** հետազոտող ու ստեղծագործող պատմաբանի պարագայում, և թե ինչպես է այն **ներկայանում** ընթերցողի պարագայում, **հասկացման ու մեկնողաբար բացորոշման** անհրաժեշտության մասին նշում է երբեմն ուղղակիորեն<sup>10</sup> և մնացյալ այլ էջերում նաև անուղղակիորեն՝ սկզբունքորեն պատմության հասկացման խնդրակարգում նշելով **պատմության միջոցով ներկայի** և դրա հետ մեկտեղ **ներկայի կարիքով պատմության** հասկացման մասին: Նա իր այլ աշխատություններում ևս մասնավորապես պատմական իրողությունների, անգիր և-կամ գրավոր աղբյուրներից ու վկայություններից, մշակութային ու քաղաքակրթական և, ուրեմն, պատմական հետքերից իմանալի իսկությունների ու իմաստների բացահայտման վերաբերյալ խոսելիս նշում է հենց «հասկացման» ու «մեկնաբանության» անհրաժեշտությունը: Նրա պատմատեսական բնույթի դիտարկումներն ու մտորումները, ըստ էության, ներկայանում են որպես պատմագիտության անհրաժեշտ ու նախընտրելիորեն պիտոյական գոյության կերպի հասկացմանն ու մեկնողաբար բացորոշմանն ուղղված խորհրդածություններ: «...Բազում իր աշխատանքներին Բլոկը նախադրում է «դիտողություններ մեթոդի վերաբերյալ»»<sup>11</sup>: Պատմատեսական բնույթի իր երկում հետազոտելով բուն պատմությունը՝ որպես այդպիսին, և այլ ստեղծագործություններում հետազոտելով պատմական տարբեր կոնկրետ իրողություններ՝ նա անդրադառնում է պատմության տեսության սկզբունքային հարցերին, որով իսկ իրագործվում է պատմության՝ որպես այդպիսին, գոյության **ինքնահասկացում** և պատմության՝ որպես գիտություն, կայացման առավել ու հենց նախընտրելի հնարավորությունների բացահայտում: Կարելի է նկատել ու եզրակացնել, որ այդ ամենով նա խոստովանում է պատմության բովանդակ խնդրակարգում հասկացմանն ու մեկնաբանության, այսու և հերմենևտիկայի խնդրակարգի, անհրաժեշտորեն ու նաև նախընտրելիորեն ներհյուսվածությունը:

Կարելի է ամրագրել, որ հասկացման ձգտող և հասկացմամբ իսկ իմաստություն ուսանել կամեցող ամենքի և, անշուշտ, **հետազոտողի, կնշանակի՝ նաև պատմագիտության ու հենց պատմության իմաստա-**

9 Նույն տեղում: Կարելի է հասկանալ և, այնուամենայնիվ, չհամաձայնել հայտնի միջնադարագետ Ա. Գուրևիչի տեսակետի հետ, ըստ որի՝ Ռ. Քոլինգվուդի «Պատմության գաղափարը» երկի «պաթոսը պատմության՝ որպես գիտություն, հնարավորության ժխտումն է»: Տե՛ս Гуревич А. М. Блок и «Апология истории» // Блок М. Апология истории. М., 1986, с. 190:

10 Տե՛ս Блок М. Апология истории, М., 1986, с. 10, 11, 25–27, 29, 32, 33, 38, 80, 82:

11 Гуревич А. М. Блок и «Апология истории» // Блок М. Апология истории. М., 1986, с. 197.



սիրության, խնդիրը իրենում խորհուրդ ունեցող եղելապատումի և ուրեմն *խորհրդավոր պատմության հասկացումն ու մեկնությունն է և այդ հասկացման ու մեկնության մեջ՝ պատմության իսկության, նրանում ի պահ և ի հայտ խորհրդի բացորոշումը:*

20. Պատմությունը ներկայանում է որպես **հասկացման ենթակա փորձառություն**, հայտնացույց է անում նշանակալի խորհուրդ և նրա ընթերցմամբ հասկացվում է **իմաստություն**: Պատմությունը՝ որպես «հասկացող» և «մեկնող», ուղղորդվում է իմաստի ընկալմանը և իմաստնացմանը: **Պատմությունը և նրանում պատմվող «ասելիքը»՝ որպես ընթերցող անձին ժամանակակից, իր այդ բնույթով իսկ մեկնողական է:** Ինչպես և սկզբում ասվեց, պատմության հարաբերությունը հերմենևտիկայի հետ չի կարելի դիտարկել որպես ուրույն գիտակարգի սուսկ **հաղորդակցական** հարաբերություն մեկ այլ գիտակարգի հետ: **Պատմությունը՝ որպես սկզբունքորեն մեկնողական, մեկնում է աշխարհի, որում և մարդկային ինքնության, կյանքի ու մշակույթի եղելականությունն դարձած լինելություն, և, զարմանալի է, իհարկե, նաև՝ հիացական, մեկնում է ... հենց պատմություն:**

21. Պատմության մեկնողականության վերոնշյալ զարմանալի իրողությունը որպես ինչ գոյավոր և ինչպիսի՞ գոյության մոդուսում է ի հայտ բերում «պատմություն» կոչվողը մտքի «դիտողության» հանդիման: Պատմությունն իր մեկնողական բնույթով ներկայանում է իր գոյության հետաքրքիր և հենց մարդկային առանձնահատկությամբ: Ո՞րն է այն: Մարդու կեցողությունը, ըստ Մ. Հայդեգերի, իրագործվում է և՛ որպես **գոյական** (օստիկ), և՛ որպես **գոյաբանական** (օստոլոգիական), և այս առումով մարդու գոյությունը երկմիասնական բնույթի է՝ **գոյական-գոյաբանական** (օստիկ-օստոլոգիական)<sup>12</sup>: Պատմությունը, նույնպես հասկանալով ու մեկնաբանելով կյանքի եղելումի իրադարձություններ և գործեր, ապա նաև ինքնահասկանալով հենց պատմություն ու, այդկերպ, կայանալով որպես պատմագիտություն, իմանալի է դարձնում իր գոյության մարդկային վերորբերյալ առանձնահատկությունը, ըստ որի՝ ներկայանում է մեզ ոչ միայն որպես սուսկ գոյական կամ՝ սուսկ գոյաբանական, այլև իր բնության այդ երկմիասնությունն ունեցող ու, ընդամին, իրենում և-կամ իրենով իսկ ինքնահայտվող գոյութենական իրողություն: Եվ աստ հակիրճ բանաձևմամբ կարելի է ամրագրել, որ **պատմությունը՝ որպես այդպիսին, իր գոյությունում երկմիասնություն է և ներկայանում է որպես գոյական-գոյաբանական (օստիկ-օստոլոգիական) կամ գոյութենական ֆենոմեն**<sup>13</sup>:

12 Մարդու գոյության՝ որպես իսկ «կեցողության» կամ «ներկայության» («Dasein»), օստիկ-օստոլոգիական բնույթի մասին առավել մանրամասն տես **Хайдеггер М.** Бытие и Время. М., 1997, с. 12-14: 13 Ֆենոմենի գոյութենական այս ըմբռնումը դուրս է գալիս հուստեյան ֆենոմենոլոգիայի շրջանակներից և որպես այդպիսին իր ձևակերպումը ստանում Մ. Հայդեգերի կողմից վերաիմաստավորված ծջգրմամբ: Է. Հուստեյի ֆենոմենոլոգիայում ասելով «ֆենոմեն», նկատի է առնվում Հուստեյի՝ ճանաչողական իրադրության ու հարաբերակցության մեջ միայն որոշարկելի և ուրեմն իդեական կամ ոգեղեն բնություն ու բովանդակություն ունեցող՝ «ինքն իրեն ցուցանող երևույթ», այլ ոչ որպես այնպիսի «ֆենոմեն», որն իրենից անդին ունի նաև էություն, ինչպես ընդունված էր նախկինում: Հուստեյան այս հասկացությունը այս և այլ իմ հոդվածներում ու նաև մենագրություններում գործածված է Մ. Հայդեգերի վերաիմաստավորմամբ՝ որպես ամենայն ճանաչողական իրադրությունից ու հարաբերակցությունից առաջ արդեն իսկ անհրաժեշտաբար գոյություն ունեցող՝ «գոյութենական ֆենոմեն», որը և թարգմանաբար կարելի է հայերեն փոխանցել

22. Հիմնավորությամբ հանդերձ՝ ամրագրվեց, որ **մեկնողականությունը պատմության սկզբունքային հատկությունն է**: Պատմությունն իր որպես «ինչ» գոյավոր և «ինչպես» գոյության մոդուսում իր մեկնողական բնույթի ինչպիսի՞ այլ առանձնահատկությամբ է ներկայանում: Միջնադարյան պատմական ավանդության՝ պատմիչների պատմագրության նկատմամբ իր հարաբերության մեջ ժամանակակից հայ պատմագիտության մեջ 19-րդ դարից ի վեր իր ընդգծված կերպով արտահայտվածությամբ և հիմնորոշ գերակայությամբ հաստատված կարելի է նկատել **պատմվող եղելությունների հավաստիության խնդիրը հավաստիության ժամանակակից մեկնաբանությամբ**: Պատմական տեքստերի քննական հասկացման և մեկնաբանության խնդրակարգում այս հարցն ունի էական նշանակություն: Անհրաժեշտ է, սակայն, նկատել, որ պատմագիտության մեջ այդ հարցի էականությունը ժամանակակից մտքի նորահայտությունն չէ: Այն հատուկ է նաև միջնադարյան պատմագիտությանը<sup>14</sup>:

Ժամանակակից պատմագիտությանը բնորոշ է, որում և հիմնորոշ ու գերակա, մեկ այլ առանձնահատկություն ևս՝ **քննողաբար վերակազմել նախկինում համայն եղելումի համալիր պատմագրությունը**<sup>15</sup>: Իսկ համայն եղելումի համարովանդակ պատմագրությունը թեև իր կատարելության մեջ մարդկային կարողությանը սկզբունքորեն անհասանելի, այնուամենայնիվ, բոլոր հնարավոր իր կատարումների մեջ իրադարձությունների ու գործերի սոսկ քանակական կուտակություն ու շտեմարան չէ, այլ կանաև որակականը, թե ինչ որպիսությամբ են մտովի տեսնվել, հասկացվել ու մեկնորոշվել եղելությունները՝ հասկացման ձգտող անձի բանական հոգու և մտքի գործուն մասնակցությամբ, և թե ինչ որպիսությամբ են հասկացմանը ներկայանում նաև այդ եղելությունների կոչումն ու իսկությունը, պոտենցիան-իրագործվածությունը-ակտուալությունը, իրենց ժամանակատեղիում ու միջավայրում մասնավորության և-կամ միասնականության կերպագործման մեջ հիմնորոշ հոգևոր ու քաղաքակրթական սկզբունքները: Նկատելի է, որ ժամանակակից պատմագիտության այս առանձնահատկությամբ դրսևորման մեջ ևս ներկա է հասկացման ու մեկնաբանության խնդրակարգը:

Հայագիտությանն ու նաև ժամանակակից պատմագիտությանը բնորոշ է նաև երրորդ առանձնահատկությունը. պատմված «անցուդարձից» և մշակույթի բեկորային հետքերից հայոց աշխարհում համայն տեղի ունե-

«բներևոյթ (բուն երևոյթ)» կամ «ինքներևոյթ» (ինքն իրեն երևեցուցանող, հայտնող, ցուցադրող երևոյթ) բառերգրի միջոցով՝ այդկերպ անվանմամբ նկատի ունենալով գոյություն ունեցող և հենց իր գոյությամբ ինքն իրեն ցուցանող երևոյթ (տե՛ս **Хайдеггер М.** Исследовательская работа Вильгельма Дильтея и борьба за историческое мировоззрение в наши дни. Десять докладов прочитанных в Касселе (1925), В. Ф., НИИ, 1995, с. 128-129, տե՛ս նաև **Хайдеггер М.** Бытие и Время. М., 1997, с. 28-31): Իսկ «phenomenon» բառերգրի որպես «բներևոյթ» թարգմանությունը տե՛ս **Յ. Չագվազճեան**, Ընդարձակ բառարան անգլիերեն-հայերէն, Պոսթըն, 1922, էջ 1044:

14 «Հավաստիության» խնդրի առնչությամբ առավել մանրամասն տե՛ս **Քոչարյան Ռ.**, Մովսես Խորենացին և պատմության խնդրակարգը // Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, հատ. 1, Եր., 2013, էջ 154-157:

15 Այդ մասին ևս տե՛ս նույն տեղը, տե՛ս նաև՝ **Քոչարյան Ռ.**, Պատմության մեկնողականությունը և Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց» աշխատության իմաստափորոշ առանձնահատկությունը (գ. Օշական) 1998թ. կոնֆերանսում կարդացված զեկուցման հողվածային տարբերակը - «Ռուբիկոն», Եր., 2/10/2006, էջ 5:

ցածի համալիր պատմագրության վերակազմումը նրանում իրագործվում է ինքնացույց լինելու ընդգծված ու նպատակադրված արտահայտությամբ: «Ինքնացույց» լինելու դիտավորությունը, կերպարանումն ու կատարումը սկզբունքորեն իրագործվում է այնպես, որ պատմվող նյութը, այլ ժողովուրդների ու օտարազգի պատմիչների պատմություններում պատմվող նյութի համադրությամբ ու համակցությամբ, ոչ միայն գիտական, այլև հետաքրքրվող ու որոնող, միտք ունեցող և կենտրոնացող «ուշ»-ով ամենքին՝ և՛ մեզ, և՛ այլոց, ի հայտ դարձնի ու փաստի որպես անհերքելի, համաշխարհային և հատկապես նշանակալի ու առաջադեմ նկատվող քաղաքակրթություններին **հայոց ճյուղի, նախ և առաջ մշակութային (և այս առումով հոգևոր-ստեղծագործական) մասնակցային հայտը՝ որպես պոտենցիա և ապա՝ որպես նաև այս կամ այն չափով արդեն կենսագործյալ եղելություն՝ համաշխարհային քաղաքակրթական բազմալ ոլորտներում (մշակութային, քաղաքական, տնտեսական, ռազմական,...) մասնակցաբար գործուն ներընդգրկվածությամբ վաղուց ի վեր միահյուսությունը:** Ժամանակակից հայագիտության ու նաև պատմագիտության այս առանձնահատկությամբ իրագործման մեջ ևս՝ այդ իսկ դիտավորությանն ու կատարումին համապատասխան ներկա է մեկնաբանություն:

Արդարև, մարդկության հանուր արմատից սերող և ապա՝ Նոյի գավակներից սկզբնավորյալ մարդկանց ազգերի և կոնկրետորեն հայոց ճյուղի ներկայացման՝ համախումբ ինքնության, կյանքի ու մշակույթի առաջացման, կայացման ընթացքի ու իրենց ներկայում որպիսության սկզբունքային խնդիրներին, իրենց առձեռն ու մատչելի պատմական աղբյուրներով ընձեռված հնարավորությամբ, անդրադարձել են նաև մեր պատմիչները և հենց Սովսես Խորենացին: Այլ է, սակայն, մեր պատմիչների ու հայրերի վերաբերմունքն իրենց աշխատություններով մեզ հղված ու հասած պատմական ավանդությանը: Պատմիչների տեքստերում, ընդհակառակը, չի նկատվում ինքնացույց լինելու վերոնշյալ ներքին կարիքով պայմանավորված դիտավորություն, ուստի և նպատակային այդպիսի գերխնդիր կամ առանցքային ուղղորդվածություն: Հայոց տեքստամշակույթի առավելապես պատմասաց բնույթը և հենց պատմասացությանը նրանց ուղղվածությունը ընթերցող ու հասկացման ձգտող սիրուն և մտքի ուշին մատչելի է դառնում ո՛չ որպես ինքնացույց լինելու ժամանակակից ֆենոմեն և ո՛չ էլ որպես ինքնանպատակ, ինչն առավել ակներևությամբ նկատելի է հենց Սովսես Խորենացու մոտ և ընդհանրապես 5-րդ դարի պատմագրության մեջ և նշանակալի չափով նաև հետագա դարերի մեր պատմիչների երկերում: Ինչպես և կոնկրետորեն հատկորոշվել է Խորենացու պատմագիտական հայեցակարգի առնչությամբ սույն ու նաև իմ այլ գիտական հոդվածներում, իրենց երկերում և-կամ երկերով ասելիքի բուն պատումի և պատմողական կերպի հյուսման նրանց ընտրությունը, հատուկ դիտավորությունն ու կատարումը ուներ նպատակային հիմնավորություն և առնչվում էր **մարդկային կենսահոգևոր գոյությանն** ամենաէական ու գերագույն կենսա- և հոգենպատակային իդեալի՝ **կյանքի եղելություններում բացահայտել տեսական ու գործնական իմաստություն՝ ճշարտությունն ու բարին,**

**ի կրթություն ընթերցող ու հասկացման ձգտող ժամանակակիցների ու սերունդների հավատի, հույսի ու սիրո, իղձերի, մտքերի ու գործերի և, այսկերպ, բովանդակ ինքնության ու կենսակերպի:**

Կարելի է նկատել, որ միջին դարերի քրիստոնյա մեր պատմիչների վերաբերմունքն իրենց նախորդ ժամանակների քրիստոնյա այլ պատմիչներին և նրանց աշխատություններում պատմվող բովանդակությանը էապես տարբերվում է 19-րդ դարում ու որոշ մասնագետների կողմից նաև 20-րդ դարում նկատվող վերաբերմունքից **իրենց ուսումնասիրող մտքի որոնումի և պատմության հյուսման խնդրակարգում սկզբունքորեն իմաստության նպատակամետ հոգևոր կեցողության առանձնահատկությամբ:** Նրանց վերաբերմունքին ու աշխատություններին հատուկ է միմյանցից ուսանող և միմյանց **փոխլրացնող** բնույթը, որ պայմանավորված է բուն իմաստությամբ ըստ մարդկային կարողության վերահասու լինելու իրենց սկզբունքային ուղղորդվածությամբ և գիտության կատարելությունը հենց որպես իմաստության ներկրթություն հասկացող ու հետամուտ դիրքորոշմամբ: Հնարավոր է նաև մտածել, որ մինչ եկեղեցիների բաժանումն ըստ դավանության, պատմիչների վերաբերմունքն ու նրանց աշխատություններում պատմվող բովանդակություններն առավելաչափ անխաթարությամբ կարող էին լինել միմյանցից ուսանող և միմյանց փոխլրացնող: Թեև նկատելի է, որ և՛ միմյանց, և՛ աշխատություններում պատմվող ավանդության նկատմամբ այսկերպ կազմակերպված բացությունը ոչ մշտակա, այլ որոշ չափով շարունակական է եղել նաև հետագա դարերում, հիմնականում յուրաքանչյուրի համար համընդհանուր նույնականության հարցերում և առավելաբար իր միտողության մեջ, երբ հոժարում ու նախընտրելի էին դիտում գնահատել միմյանցից՝ անձից կամ տեքստից ուսանելը, իսկ տեսակետների որոշ տարբերությունների դեպքում, այնուամենայնիվ, նշանակալի հարցերում միմյանց նկատմամբ խաղաղություն ու ձշմարտության լրիվություն որոնող ու հասկացող տեսակետի հասանելը: Ի համեմատ այդ հայեցակերպի՝ լիովին այլ է ժամանակակից հումանիտար և սոցիալական գիտություններին բնորոշ առանձնահատկությունը, որում կենագործվում է՝ ամենայն իրենց հայացքներում հիմնականում ու առավելապես **այոց իմացակերպից տարբերվող նորի բացահայտությունը** որպես գիտության կատարելագործություն հասկացող ու հետամուտ ժամանակակից դիրքորոշումը:

23. Մովսես Խորենացին «Պատմութիւն Հայոց» երկում իր ասելիքն ամբողջացնում է հայոց կյանքի իրեն ժամանակակից իրողությունների ու նշանակալի փոփոխությունների մասին հայտնելով: Նա, կյանքի այդ ժամանակաշրջանի իրադարձությունների ու գործերի իսկությունը հայտնելով, իրեն ըղձալի երազանքների համեմատ իրականության ստորանկյալ, շնորհագուրկ ու հոգեկորույս գործընթացներին ականատես լինելով, խորապես ապրված իր գնահատականն է արտահայտում իր պատմական երկը եզրափակող «Ողբ»-ում: Առհասարակ նշանակալի փոփոխությունների ժամանակաշրջաններում առավելաչափ են ընդգծվում ինքնության կեցողության և ինքնությունների գոյակցության ու «անելիքի» խնդրակարգի հասկացման ու բարեկարգման անհրաժեշտությունն ու նախընտ-

րելիությունը: Հայոց կյանքում երբեմն իմաստուն ու բարեկարգ և առավել հաճախ անիմաստուն ու անբարեկարգ նախկինից որպես ժառանգություն մնացած պատմագիտության անիսկական գոյությունը թոթափել կամեցող ամենայն ժամանակում և Խորենացու, և ամենայն սերունդների ու նաև մեր ներկայում մարդկային սիրտը, իղձն ու փափագը և ըստ այդմ՝ խոկացող մտքի սլացքը մարդկային ու դրանում նաև ազգային իր ինքնության, կյանքի ու մշակույթի յուրահատուկ կարիքով և խնդրի դրվածքով «ի խորհուրդ, ի բան, ի գործ» է կոչում պատմությանը: Այս առումով ինչպիսին է հարցականի ու անորոշության առաջ կանգնած յուրաքանչյուր ներկայի համար մարդկային ինքնության, համակեցության ու մշակույթի կարիքային հիմնախնդիրներով պայմանավորված՝ պատմագիտությանն առաջադրվող **համընդհանուր ու նաև համընդգրկուն** և տվյալ ներկայում երբեմն առավելաչափ ընդգծվածությամբ **այժմեական ու հրատապ** խնդիրների ու ամբողջական հարցադրության յուրահատկությունը, և ըստ այդմ՝ **ինչպիսիք բնույթով և առանձնահատուկ գոյությամբ է բացահայտվում պատմությունը**: Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկի ուսումնասիրության արդյունքում կարելի է նկատել այդ խնդիրների սկզբունքորեն ունիվերսալությունն ու ժամանակին ոչ ենթակա լինելը, որով և ի հայտ է գալիս դրանց **հոգևոր** բնույթը:

24. Պատմահոր ժամանակաշրջանում հայոց կյանքում ներկա ու նաև ընդգծված կերպով արտահայտված էր մարդկային ու նաև ազգային հոգևոր ինքնությամբ, կենսակերպով ու մշակույթով կարգավոր և հենց բարեկարգ լինելության խնդրակարգը<sup>16</sup>: Ըստ Մովսես Խորենացու՝ **կարգավոր լինելության** սկզբունքների որոնման խնդիրն է իր մշակութային դրսևորմամբ ձևակերպվում որպես **պատմության հետազոտության թեմա**: Ավելին, մարդկության կյանքի ողջ եղելումի ամենայն ժամանակների համար ևս՝ որպես **պատմության կոչում ու նախընտրելի իսկություն**, կարելի է նկատել վերոբերյալ բացահայտությունը, այն, որ ոչ թե գուտ նախկին կյանքի եղելության իսկությունը, **այլ կարգավոր լինելության, որում և բարեկարգության նպատակամետ ընտրության, մտքի ու գործի միասնությամբ ապրված կյանքի նախընտրելի կերպօրինակների և դրանցում՝ հենց սկզբունքների որոնման մշտապես արդի խնդիրն է իր մշակութային դրսևորմամբ, անհրաժեշտ ու նաև նախընտրելի պիտոյականությամբ՝ սկզբունքորեն ձևակերպելի որպես պատմության հետազոտության թեմա**:

Պատմության՝ որպես այդպիսին, կայացման գործոնների հարցադրությունն ուշադրության կենտրոնում է նաև ժամանակակից պատմագիտության մեջ, և այս առնչությամբ Բենեդեկտտո Կրոչեն գրում է. «... Միայն ներկայի հետաքրքրությունը կարող է հանդես գալ որպես շարժիչ անցյալի փաստերի որոնման: Անցյալի փաստը, գտած ու միացած ներկայի հետաքրքրությամբ, դառնում է ներկայի իրողություն, այլ ոչ անցյալի»<sup>17</sup>: Խո-

16 Այդ կարգավորության բազմաբովանդակ արտահայտությունների ուսումնասիրություն է Ա. Ստեփանյանի մենագրությունում Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» աշխատությանը նվիրված բաժինը: Տե՛ս **Степанян А.** Развитие исторической мысли в древней Армении. Ер., 1991, с. 134-189:

17 **Кроче Б.** Теория истории // Антология сочинений по философии: история, экономика, право, этика, поэзия, “Пневма”. СПб, 2005, с. 175-176.

րենացու երկում նկատելի է այդ պատմահետազոտական հետաքրքրության խորը հիմնավորվածությունն իր ժամանակի հոգևոր կարիքների վրա, որոնք իրենց այդ հոգևորությամբ ներկայանում են որպես մարդկային ու նաև հայոց ինքնության, կյանքի ու մշակույթի **ունիվերսալ** կարիքներ: Նրա երկում, ներկայի հոգևոր կարիքներով պայմանավորված, **կարիքային այդ հիմնախնդիրների և պատասխան-լուծումների հասկացմանն ու կենագործմանը նշանակալի հարցադրությամբ, որոնումով և ուսումնասիրությամբ** իրագործվում է անցյալի եղելություններում ըստ էության, ողջ մարդկության ու մարդկանց ազգերի, հանրությունների, խմբերի կենսափորձառությամբ ու նաև հոգևոր փորձառությամբ ընձեռվող հնարավորություններում, անհրաժեշտություններում ու նախընտրելիություններում՝ բուն իսկություն հայտող իմաստների ու իմաստության խորհուրդների բացորոշում:

Խորենացու պատմագիտական հայեցակարգի այս առանձնահատկությամբ կայացյալ՝ **հայոց պատմությունը մասնակից է դառնում մարդկային և կոնկրետ հայոց ինքնության լինելիությանը՝** մտքերին, ուսմունքներին, գործերին: Ավելին, պատմության կոչման և խնդրակարգի ու կատարումի այդպիսի տեսանության առանձնահատկությամբ կայանալու պարագայում՝ **ամենայն պատմություն ունակ և ի զորու է մասնակից դառնալու մարդկային ինքնության ու կյանքի լինելիությանը: Պատմությունը ներկային իր մասնակցությամբ ժամանակակից է, նշանակալից և էական ասելիք ունեցող ընթերցող ներկային:** Կարելի է նկատել և ըստ իս՝ հարկ է նաև որպես հայեցակարգային նշանակություն ունեցող միտք ամրագրել, որ **պատմության՝ ընթերցող ու հասկացման ձգտող ներկային ժամանակակից դառնալը պատմության կոչումն ու իսկությունն է:**

*Պայրմության գոյության սկզբուքային այս առանձնահատկությունը գիտակցվում ու ընդգծվում է նաև ժամանակակից պայրմագիրության մեջ: Մեկնորոշելով մասնագիտական գրականության մեջ մերքի հայրնի բանաձևը՝ «Յուրաքանչյուր իսկական պայրմություն միշտ ժամանակակից է»<sup>18</sup>, Բ. Կրոչեն գրում է. «... պայրմությունը..., եթե նրանում կա իմաստ (և ուրեմն կա նրա իմաստավորվածություն (հավելումը մերն է – Ռ. Ք.)), այլ ոչ միայն օղի դարարկ փայրանում, միշտ ժամանակակից է: Պայրմության ժամանակակից լինելու պայմանը կլինի նրա լավածությունը պայրմիչի հոգում կամ, եթե գործածվի պայրմարհեստի տեխնիկան, անհրաժեշտ է, որ պայրմական փաստաթղթերն ըմբռնելի լինեն բանականությանը»<sup>19</sup>: Ըստ Կրոչեի՝ բազում եղելություններ՝ Պետրոսնեսյան պայրերագմը, մեքսիկական արվեստը կամ արարական փիլիսոփայությունը րվյալ պահին անձի համար կարող են և չներկայանալ ու չլինել պայրմություն, այլ միայն կյանքի ու մշակույթի եղելությունների անուններ: «Նրանք կդառնան պայրմություն նրանց համար, ովքեր հոգ կանեն խորհել դրանց մասին ըստ իրենց հոգևոր պերքերի»<sup>20</sup>: Այս առնչությամբ և հենց **հոգևոր բնույթ** ունեցող պայրմական իրադարձության և ուրեմն սկզբունքորեն պայրմության մասին արտահայտվելով՝ ընթերցող ու հասկացման ձգտող ներկային պայրմության ժամանակակից*

18 Նույն տեղում, էջ 176:  
19 Նույն տեղում, էջ 175:  
20 Նույն տեղում, էջ 176:

դառնալու առանձնահատկությունն է մեկնողաբար բացորոշում նաև Օ. Շպաննը<sup>21</sup>. «Լոկ այնպեղ, որպեղ **ժամանակակից ներկայում ներկայակից է անցյալը**, ընդհանրապես րեղի ունի այնպիսի մի բան, ինչպիսին պարմությունն է: Սակայն, եթե այդ անցյալը հանկարծակի դադարեր լինել **ժամանակակից**, կդադարեր գոյությունը նաև պարմության: ...Որքան հզոր է մարդու, ժողովրդի, պետության ոգին, այնքան նշանակալի է նրա կարողությունը **պարզաբեր անելու յուրաքանչյուր անցյալ**, այնքան մեծ աստիճանի նա ունի պարմություն, և, ընդհակառակը, որչափ րկար է ոգին, այնչափ մեծաստիճան նա գորի է պարմությունից» (ընդգծումները մերն են – Ռ. Բ.)»<sup>22</sup>: Ժամանակակից պարմագիտության մեջ և մասնավորապես Ֆ. Անկերմիթի «Պարմային րումաբանությունը» երկում նայնպես սկզբունքորեն ընդգծվում է «պարմության» ու հենց «պարմի» **վերաներկայավորող** հիմնային գործառայթ: Աար պարմության հարաբերակցությունը աշխարհի ու կյանքի անցյալի ու ներկայի որպիտությանը՝ առավելապես պարմիչի ինքնակամությանն ու երևակայությանը ենթակարգված թվացյալ «ազարություն» որոնող նրա հեարադիական (պարմողեննիպական) րեսակետում, իր բաղկացուցիչ մասերի առ ամբողջ շարադրանքում ոչ ամենևին ներքուսար հեարողականությամբ, պարմությունը, որում և **պարմային սուբարանցները** (հիմնապարմները), լեզվարումաբանական փոխկապակցյալ իրենց բովանդակությամբ՝ իրագործվում են աշխարհի ու կյանքի անցյալի ու ներկայի եղելություններին դիարահայեցող **հիմնապարմ(ներ)ին** ներհարուկ մեկնաբանության ու հենց **վերաներկայավորման** հիմնային գործառայթ<sup>23</sup>:

Ներկային նշանակալից ու ասելիք ունեցող իր մասնակցությամբ ու այսկերպ՝ ժամանակակցությամբ պատմության գոյությունը դառնում է **ներկա**: Այս դեպքում պատմությունը մարդու համար իրոք **կա** և հենց այնպես, ինչպես որ պետք է լիներ, ինչին և կոչված էր: Այն պատմվել էր՝ սերունդներին հղելու համար, նրանց՝ որպես **մոտ և մերձավորագույն** կարգելու համար, **խորհրդակից ասելիք**՝ ընթերցող յուրաքանչյուրի համար՝ օգտակար և պիտանի իմաստավորությամբ: Պատմությունը հեղինակին ժամանակակից ընթերցողների ու նաև սերունդների ներկաներին իր այդ խորհրդակից ասելիքով է դառնում ներկայակից ու ժամանակակից: Այսկերպ ճշգրտմամբ՝ վերորերյալ միտքը հնարավոր է այժմ վերաձևակերպել այլ բանաձևմամբ. **պատմությունն ընթերցող ներկային նշանակալից ու էական իր ասելիքով ժամանակակից ու հենց մասնակից է ներկայի կայացմանը՝ մարդկային ինքնության, կյանքի ու մշակույթի լինել(ի)ությանը**:

25. Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգում **պատմությունն ունի այժմեական և հենց հոգևոր առումով նշանակալին խորհելու և կյանքի նախկին եղելության նկատմամբ այդ հարցադրելու և, այսկերպ, նշանակալի և ուղեցույց իսկություն ու խորհուրդ բացահայտելու հանձնառություն**: Այժմեական ու հենց հոգևոր առումով նշանակալին խորհելու, ասելու և ըստ այդմ ցուցանելու կամավոր հանձնառությունը պատմությունն ինքնագիտակցում է որպես իր իսկ վերաիմաստավորման և վերակազմության խնդիր: Ժամանակակից իրողությունների

21 Տե՛ս Պանն Օ. Философия истории. СПб., 2005, с. 41-47:

22 Նույն տեղում, էջ 42:

23 Տե՛ս Անкерսմիտ Փ. Нарративная логика: семантический анализ языка историков. М., 2003:

ինքն իրեն մերձավոր տեսնելու պատմության միտումն իր իսկ ներսում ձևակերպում է **«պատմության կարիքի»** ֆենոմենը (բներևույթը՝ բուն երևույթը, ինքներևույթը), կյանքի եղելության նորովի վերապատմվելու, նորոգվելու խնդիրը՝ պատմումի մեջ անցյալում եղածը **այնպիսի դիրքով կարգելու**, որ ի հայտ բերվի դեպի ներկան նրա հղվածությունը, հայտնվի այս կերպով յուրաքանչյուր ընթերցող ներկայի նկատմամբ **ասուն պատմության** նշանակալի խորհուրդը: Մշակութային այս երևույթն ի հայտ է բերում կյանքի ու մշակույթի եղելության հասկացման ու ինքնահասկացման մեկ միասնական խնդրակարգում նրա ճկունությունը **իմաստի** գիտողությունում, երբ իրադարձությունների անիսկությունը որպես թե իսկություն հասկացող ու բացահայտող պատմագիտությունն իր այդկերպ անիսկական գոյությունից նորոգվում է դեպի իսկական գոյություն և արդեն նորոգյալ բացությամբ ու հասողությամբ (разумение) եղելությունների իսկության, պատճառի ու նշանակալիության հասկացմամբ ու մեկնողաբար պատմամբ՝ փոխակերպվում ու վերընթանում **իրադարձությունների իսկությանն ու խորհրդին իմաստնացյալ գիտության:** «Պատմության կարիք» իրենում բացահայտելու, երբեմն նաև նորոգվելու (նորովի վերապատմվելու) և իր կոչմանն ու իսկությանը համապատասխան գոյության սկզբունքային ու նաև նախընտրելի պիտոյականությամբ իր իսկական գոյության մեջ հաստատվելու այսպիսի իրադրություններում պատմությունն ի հայտ է բերում իր սկզբունքային բացություն-ընկալունակությունն ու հարաբերակցությունը իմաստության նկատմամբ և, այսկերպ հասկանալով ու պատմելով ճշմարիտ իմաստ ու խորհուրդ, այսինքն՝ պատմելով իմաստություն, **իր գոյության անիսկությունից ու անիմաստությունից** փոխակերպվում ու վերակարգվում է որպես **իմաստավոր**, նաև մարդկային ինքնության, կյանքի, մշակույթի ու հենց պատմագիտության այդ նույն ներկա ժամանակի նկատմամբ:

26. Կյանքի մշակութային իրադարձության իսկությունն ու խորհուրդը և, այդպիսով, իմաստությունը հասկանալ ու պատմել ձգտող և-կամ արդեն այդկերպ նորագրյալ ու նաև այդ որպիսությամբ կայացյալ, նախկինից ավանդված յուրաքանչյուր պատմություն սկզբունքորեն ու միշտ է սերունդների յուրաքանչյուր ներկայի համար **ժամանակակից պատմություն** և որպես այդպիսին (իմաստությամբ այժմեական ու ժամանակակից) **անմիջականորեն մասնակից է կյանքի ներկային ու ապագային և հենց պատմության գոյությանը:** Իր իսկ վերաիմաստավորմամբ պատմությունը մասնակից է մարդկային ինքնության, կյանքի ու մշակույթի և հենց իր՝ պատմության, և անցյալի նորահայտ իսկության բացահայտմանը, այդկերպ նաև վերակազմավորելով անցյալի հասկացումն ու այդ հասկացման մեջ՝ անցյալի ներկայությունը, և ներկայի, և ապագայի կայացմանը: Պատմությունն այլևս նախկին եղելությունների սոսկ իմացության շտեմարան չէ և այդ իմաստով միայն՝ պատմական ու մշակութային ինքնության եղելության իմացություն և այդչափ ինքնագիտակցում ու **տեսական գիտություն:** «Պատմությունը ներկան ամրապնդող, իմաստավորող ոգևորություն ու ուժայնություն է հաղորդում սերունդներին: Պատմությունը լցվում է ներկայի մեջ, նրան հաղորդում որոշակի իմաստ, փորձառություն, իդեալների



առաջադրում ու դրան իրականացնելու ձգտում»<sup>24</sup>: Ըստ իս՝ պատմագրական ու պատմագիտական մտքի համաշխարհային պատմության մեջ ոչ միշտ պատմության բուն կոչմանը համապատասխան իրագործմամբ, իսկ Մովսես Խորենացու պատմությանը և՛ դիտավորությամբ, և՛ կերպառությամբ, և՛ կատարումով բնորոշ՝ **պատմությունն էսցնող՝ անհրաժեշտորեն ու նաև նախընտրելիորեն պիտոյական ներքին զորություն ու հենց կայացյալ իսկություն է և ըստ այդմ մեկնորոշելի էական ատրիբուտ է այն, որ պատմությունը սկզբունքորեն ներգործուն է, իր բնության այդորակ առանձնահատկությամբ կայանալով արդեն ոչ միայն որպես տեսական, այլև գործնական գիտակարգ:**

«Պատմությունը զուտ ձանաչողական ասպեկտի հետ շարակից ունի նաև կիրառական ասպեկտ», – գրում է Ա. Ստեփանյանը<sup>25</sup>: Այդ իսկ նկատի ունենալով՝ Պատմահայր Մովսես Խորենացին գովության արժանի է գնահատում այն թագավորներին, որոնք գրով և պատմությամբ իրենց ժամանակները հաստատակարգեցին և իմաստության ու քաջության գործերն արձանագրեցին վեպերում ու պատմություններում, դրանց միջոցով աշխարհական ու քաղաքական կարգերին ուսանյալ ու իմաստասցյալ լինելու<sup>26</sup> հնարավորություն ու նպաստավորություն ընձեռելով ժամանակակիցներին ու սերունդներին՝ այդկերպ **կյանքում ներկայության կոչելով անցյալի ու նաև իրենց արդիականության եղելություններում բովանդակյալ ճշմարտության ու բարյաց իմացություն ու գիտություն՝ պատճառ ու կատարիչ մարդկային ինքնության, կենսակերպի ու մշակույթի ամենայն բարեկարգության:**

27. Պատմությունն իր բնության սկզբունքային առանձնահատկությամբ **հոգեկրթական է:** Պատմությունը իրենում պահյալ և ի հայտնություն հնարավորյալ իսկության հասկացմանը ձգտող «ընթերցասէր»-ի և «ուսումնասէր»-ի բանական հոգին ու միտքը կրթում է՝ մտածելու ու հասկանալու ոչ միայն այն, **ինչը որպես ներկա տեսնում ու զգայարաններով ընկալում է անմիջական իր ներկայակցությամբ և այս առումով *պեսանտելին*, այլև մտածել ժամանակայնորեն անցյալը, բացական և այս առումով՝ *անպեսանտելին*, զգայարաններով անմիջական փորձառությանն անմատչելի մարդկային եղելությունները՝ այդկերպ նախապատրաստելով ու «աճեցնելով» մարդկային հոգին ու միտքը, ի զորու լինել մտածելու *սկզբունքորեն անպեսանտելին և զգայարաններով փորձառությանն անմատչելին՝ ասպիլաճային իրողությունները:*** Ինչո՞ւ և ինչպե՞ս է դա հնարավոր:

Դավիթ Անհաղթը իմաստասիրության եռակազմ բաղադրության՝ բնաբանության, մաթեմատիկայի, աստվածաբանության մասին խոսելիս և ապա հիմնավորելիս ի ցույց է դնում մտքի պոտենցիան և վերընթացության

24 Սարգսյան-Կատվալյան Ս., Հայագիտության ձևավորման ժամանակի և հիմնախնդիրների հարցի շուրջ, Եր., 2013, էջ 25:

25 Степанян А. Развитие исторической мысли в древней Армении. Ер., 1991, с. 155, 156. Աստ որպես «կիրառական» է ներկայանում պատմության՝ առ իմաստություն «գործնական» նշանակությունը, իմա՝ պատմությամբ հայտնաբանյալ գործնական իմաստությունը, քանզի ստույգ առումով կիրառական կարող է լինել նաև տեսականը:

26 Տե՛ս Մովսէս Խորենացի, Պատմություն Հայոց, Եր., 1991, էջ 10:

կատարելագործող կրթությունը՝ **բնաբանության մեջ**՝ մտածել այն, ինչը կարելի է նաև տեսնել շրջակա աշխարհում, **մաթեմատիկայում (երկրաչափության մեջ)**՝ մտածել այն, ինչը կարելի է տեսնել և-կամ չտեսնել շրջակա աշխարհում, այսինքն՝ **իրերի թվաքանակը** և-կամ **թիվը՝ որպես այդպիսին**, ինչպես նաև **իրերի ինքնին** ու կապակցող **ձևը** և-կամ **ձևը որպես այդպիսին** և ապա՝ **աստվածաբանության մեջ**՝ մտածել այն, ինչը սկզբունքորեն անտեսանելի է: Դավիթ Անհաղթն իր «Սահմանք իմաստասիրութեան» աշխատության մեջ իմաստասիրության ոչ միայն արիստոտելյան, այլև կարելի է ասել նաև պլատոնյան բաժանմամբ ներկայացված իր ուսուցմամբ՝ ներկայանում է որպես իմաստության ուսուցիչ: Պլատոնի, Արիստոտելի երկերից ու նաև նորպլատոնականությունից քրիստոնեական վերաիմաստավորությամբ ուսյալ՝ իմաստասիրությունն այսկերպ մեկնորոշմամբ ներկայացնելով՝ նա իրեն նախընտրելի «ուսումնասէր» ընթերցողի հասկացման սիրուն մատչելի էր դարձնում ու թափանցել տալիս մարդու բանական հոգու ունակություն հանդիսացող մտքի վերընթացությունը տեսանելիից անտեսանելիին, երկրից երկինք, դեպի վերինն ու հոգևորը, ըստ Պողոս Առաքյալի խոսքի՝ «Եթէ յարերուք ընդ Քրիստոսի, ապա զվերինն խնդրեցէք, ուր Քրիստոսն նստի ընդ աջմէ Աստուծոյ: Զվերինն խորհեցարուք, մի՛ զայս որ յերկրի աստ է»<sup>27</sup>: Մարդկային բանական հոգին ու միտքը, առ Իմաստություն կրթությանն ու կատարելագործմանը վերընթանալով, Դավիթ Անհաղթի երկում իմաստասիրության եռակազմ ուսուցման այս ուղղորդված ընթացքով և բնաբանության մեջ իրագործելով զգայականի հետ կապակցված իր իմացությունը, հնարավորություն է ունենում իր իմացության հետագա կայացման մեջ նաև ձերբազատվել զգայականով իր կապանքվածությունից: Հայտնի է, որ բանական մտքին հատուկ **իսկության իմացության** հնարավորությունները չեն սահմանափակվում զգայական իմացության հնարավորությամբ: Մտքի կոչումն ու զորությունն առ իմացություն իսկության՝ ավելին է, քան զգայականի կոչումն ու զորությունը: **Իսկության իմացության ու իմաստության հասու դառնալու իր որոնումներում ու բացահայտումներում միտքը զգայականի հետ իր կապանքվածությունից ձերբազատմամբ է հնարավորություն ունենում կայանալ ըստ իր կոչմանն ու զորության առավելության:**

Մարդկային բանական հոգու ունակություն հանդիսացող մտածողության այսկերպ ընթացքով կայանում է «պայդեյա» (կրթություն)՝ ըստ պլատոնական հղացքի: Մարդկային հոգու ու մտքի և բովանդակ կենսակերպի կրթությունն իր այսկերպ կատարումով իրագործվում է ըստ իր կոչմանն ու կայանում իսկական գոյությամբ: Կրթությունն իր իսկական գոյությամբ, այսինքն՝ իրենում իր իսկությունն ունեցող գոյությամբ, այլ ոչ պատմական տարբեր ժամանակներում ու նաև այժմյան ներկայում համատարած ու այլևայլ ոլորտներ ներթափանցած իր անիսկական գոյությամբ, մարդկային մտքի նկատմամբ իրագործվում է՝ նրա սկզբունքային պոտենցիան՝ և տեսանելին, և անտեսանելին խորհելու զորությունը՝ ըստ սուրբ հայրերի վարդապետության, կայացնելով տեսանելիից անտեսանելիին, մարդկա-

27 Թուղթ առ Կողոսացիս, Գ, 1-2:

յին իրողություններից աստվածային իրողություններին և արարվածից Արարչին հասու դառնալու ուղղությամբ ու կարգավորությամբ մարդկային կարողությանը մատչելիի ու իմանալիի չափավորության սահմաններում:

Մարդկային բանական հոգին մրավոր իր ունակությամբ ունի սկզբունքային հնարավորություն ու հենց **կարողություն** մրածելու ինչպես փեսանելին, այնպես էլ անփեսանելին, որին և հասունանում ու մրահասու է դառնում վերոնշյալ կրթությամբ: Աստվածային է նաև պարզել, թե «մարդկային կարողություն» հասկացության մեջ «կարողությունը» վերաբերում է մարդկային **բանական հոգու և մրածողության** պոլենցիային, թե՞ գործությանը: Ինչպես արդեն ակնարկվեց, «պոլենցիա» փերմինը հայերեն «գործություն» է թարգմանվել դեռ հնուց, ինչը և արտահայտվել է ձեռագրերում: Հարկ է, սակայն, նկատի ունենալ, որ փերմինի մասին խոսելիս՝ առաջնահերթորեն մրածվում է այդ փերմինով նշվող հասկացայալը: Արդ էական է հարցադրել, թե «Գիտական լեզվամրածողությունում նոյնական են արդյոք այս փերմիններով նշվող հասկացությունները՝ բովանդակությունն ու ծավալը, թե՞ կարելի է ասել, որ գիտական և հենց հասկացության իրենց կիրառություններում դրանցում արդեն կարելի է մրովի նկատել ու ամրագրել էական փարբերություններ: Նկատենք, որ անկենդան իրերի դեպքում կարելի է ասել, որ դրանց պոլենցիան՝ հասկացված իր իսկությամբ և ուրեմն անկենդան իրերի իսկական պոլենցիան սկզբունքորեն նոյնանում է իսկական գործությանը (իր իսկությամբ հասկացված գործությանը): Իսկ մարդկային իրողությունների համայնության մեջ մարդկային անձի վերաբերություն, աստի, մրածողություն, խոսողություն, գործողություն ներկայացող բոլոր իրողություններում պոլենցիան չի նոյնանում և կարող է փարբեր լինել գործունից: Մրքին կամ մրածողությանը հարույ է շարժ և մրածողության շարժը կարող է լինել փարբեր ուղղորդվածությամբ ու ընթանալ այս կամ այն ուղղությամբ, հերևաբար այն կարող է շարժվել և՛ փեսանելիից անփեսանելիին և, ընդհակառակը, մնալ նոյնի սահմաններում և շարժվել փեսանելիից փեսանելիին: Մրքի շարժը նոյն ինքը մրքի *dinamis*-ն է, իսկ գործությունը նոյն այդ շարժն է՝ իրենում ներբովանդակյալ կամ իրենով կերպացյալ ներուժով, այսինքն՝ նոյն ինքը՝ *dinamis*-ը, իրենում ներբովանդակյալ *energeya*-յով, որը և փվյալ իրողությունը՝ ակրուալացած միքքը ու նաև խոսքի և-կամ գործի մրային կերպվածությունը, կարարումի է բերում կամային ընրություն իրագործմամբ: Մրածողության շարժը և գործությունը, ինչպես և ասվեց, կարող է կայանալ փարբեր ուղղություններով և լինել կամ առաքինի ու իմաստուն, կամ ոչ առաքինի ու ոչ իմաստուն: Մրածողության պոլենցիան, այսպիսով, ներկայանում է որպես ավելին, քան մրածողության որևէ շարժ կամ նոյնիսկ գործություն, և բնորոշելի է որպես **սկզբունքորեն հնարավոր շարժերի բոլորություն**՝ ունենալով սկզբունքային մի հարկություն: Լինել բոլոր այդ շարժերի հնարավորություններն իրենում պարունակող որպիսությամբ ակրուալացած, ձևավորված կամ նոյնիսկ արտահայտված մրքի իրողության պոլենցիա: Իսկ թե ո՞ր շարժի ուղղությամբ կընթանա մրածողությունը, կախված է արդեն կամային ընրությունից: Տեսանելիից փեսանելիին, թե՞ փեսանելիից անփեսանելիին կընթանա մրածողության շարժի կարգավորությունը, կախված է կամքի հոժարությունից և ըստ այդմ ընրությունից: Մարդկային մրածողության պոլենցիան այսպիսին է, որ իրենում ունի ընրության հնարավորություն: Հերևաբար վերոբերյալ միքքն առ այն, թե մարդկային մրածողությունն ունի փեսանելին մրածելուց բացի նաև անփեսանելին մրածելու կարողություն, ասելով՝ կարողություն, առավել ճշգրտությամբ նկատի է

առնվում ոչ թե մրաժողության պոտենցիան՝ որպես մրաժողության շարժի ու կապարումի հնարավորությունների բոլորություն, այլ հենց մրաժողության գորությունը՝ մրքի բազում հնարավորությունների մեջ հենց այն գերաշարժը, որ և հնարավորում ու կապարումի է հասցնում կոնկրետորեն փվյալ միքքը, ասար՝ անարեսանելին մրածող միքքը:

Իսկ ինչպիսի մտածողություն է իրագործվում պատմության մեջ, որ և ներկայանում է որպես պատմության բնության սկզբունքային առանձնահատկություն: Ո՞րն է պատմության բնության սկզբունքային առանձնահատկությունը, որ և հիմնորոշ է պատմողության համար և ունի **հոգեկրթական գորություն**:

Պատմությունը նույնպես ընձեռում է մտքին կրթություն և ճշմարիտ իր գորության մեջ կայացում՝ տեսանելիից անցնել անտեսանելիին, այսինքն՝ որպես խնդրո նյութ ունենալով տեսանելիին՝ խորհելով վերընթանալ ու հասու լինել անտեսանելի իմաստին ու իմաստության խորհրդին: Ինչպես է պատմությունը դա իրագործում: Պատմությունն իր գորության իսկությունը և ուրեմն իսկական ու հենց ճշմարիտ իր գորությունը, ինչպես նաև իր գորության անիսկությունը և ուրեմն անիսկական ու հենց անճշմարիտ իր գորությունն իրագործում է իր **պատմողականությամբ**: Պատմությունն իրենում այս կամ այն չափ հասկացյալ իրաց և գործոց իսկությունը հայտող «բանը» իր **պատմողության** սկզբունքային առանձնահատկություն հանդիսացող **մեկնողաբար բացորոշմամբ** ներկայացնում է այլոց հասկացմանը: Արդարև, **պատմողականությունն իրագործվում է մեկնողաբար բացորոշմամբ, որ և ներկայանում է որպես պատմության բնության սկզբունքային առանձնահատկություն**: Պատմության պատմողականությունը սկզբունքորեն **բնական կամ բնականակերպ է** և մարդկային մտածողության ամբողջական պոտենցիայի առումով **նախնական կամ առաջնային** ու նաև անգերծանելի մտածողական գորություն է: Ինչ է սա նշանակում: Նախ՝ ինչ նկատի ունենք՝ ասելով՝ պատմողականությունը բնական կամ բնականակերպ է: Պատմությունը պատմում ու ներկայացնում է նախկինում տեղի ունեցածի իսկությունը հայտող իմաստը: Բոլոր իրադարձություններն ու գործերը, որոնց գոյությունը՝ որպես այդպիսին, կայացել է տարածության ու ժամանակի չափումների մեջ կայացող այսաշխարհում ու մարդկային կյանքում բանավոր կամ գրավոր հյուսմամբ ու, այդկերպ հնչյունային կամ գրային ամրագրմամբ ձեռք բերելով սկզբունքորեն հաղորդելի դարձող՝ տեղի ու ժամանակի մեջ գոյություն ունեցածը կերպառնող իմաստ, պատումակերպվում ու շարադրաբար կապակցվում, որով և պատմվում ու ներկայանում է որպես պատմություն: Եվ այն, **ինչ պատմվում է ունկնդիր ու ընթերցող ներկաներին, պատմվում է որպես պատմվող աշխարհի ժամանակատեղում տեսանելի, ասել է թե իրերի ու գործերի պատահման ու գործման ներկայում տեսանելի**: Ինչպես հասկանալ ասվածը:

Ընթերցող անձն ու իր ներկան կարող է տարածական կամ ժամանակային փոքր կամ մեծ հեռակայքով բաժանված լինել պատմվող իրադարձության ներկայից՝ բացառելով ընթերցողի համար անմիջական ականատեսության իմաստով տեսանելիության ու անմիջական զգայական փոր-

ձառությանը ընկալման հնարավորությունն ու իմաստը: Ուստի կարելի է ավելի ձգգրիտ արտահայտվելով՝ ասել, որ պատմությունը իրենով պատմվողը պատմում է ընթերցող այլ ներկաներին ոչ ուղղակիորեն որպես տեսանելի, այլ «**իբրև թե տեսանելի**», այսինքն, եթե ընթերցողը թեկուզև երևակայորեն՝ իրապես անհնար, բայց մտովի հնարավոր ինչ-որ մի եղանակով հայտնվեր պատմվող ներկայում, ապա կարող էր և տեսնել պատմվող իրադարձությունը որպես կատարվող: Պատմության դեպքում գործ ունենք **այնպիսի մտքի հետ, որում մտածվում ու ներկայանալի է դառնում այն, ինչը որպես մարդկային անցուդարձ, դեպք, պատահար, իրադարձություն մարմնականացած կամ նյութականացած իր կերպում սկզբունքորեն կարող էր և տեսնվել ու մատչելի լինել զգայական ու մտավոր ընկալման մարդկային կարողությանը տեքստում պատմվող ներկայում:** Պատմությանը կամ պատմողականությանը մտածվողն ու ներկայացողը՝ պատմվող ներկայում իր բնության իրադարձակերպ մարմնավորությանը կամ նյութավորությանը, առավել ընդհանրական ու հասկացությունեն ձևակերպմամբ՝ կարելի է ասել, որ **աշխարհակերպ է** կամ, ինչպես և սկզբում ասվեց, բնական կամ բնականակերպ է: Ինչ-որ իմաստով պատմությունը նման է բնագիտությանը, որը նույնպես մտածում է այն, ինչը որպես բնութենական, մարմնական կամ նյութական նաև տեսանելի է ու սկզբունքորեն մատչելի կարող է լինել մարդկային զգայական ընկալմանը և-կամ սարքերի առավել մեծ դիապազոն ունեցող զգայունակությանը: Արդարև, մարդկային միտքը կարող է բնաբանությունից անցնել աստվածաբանության՝ խորհելով աստվածային իրողություններ՝ մտածողության խնդրո նյութ ունենալով և խորհրդածելով բնությունը: Հարկ է, սակայն, նկատի ունենալ, որ պատմությունը և մասնավորապես Մովսես Խորենացու երկում կերպացյալ Հայոց պատմությունը ևս, ուսումնասիրելով մարդկային իրողություններ և հասկանալով ու մեկնողաբար բացորոշելով իսկություն, ներկայանում է որպես էմպիրիկ հենք ունեցող գիտություն:

*Ինչպիսի՞ն է ներկայանում պատմությունը էմպիրիկ գիտության իր առանձնահատկությանը՝ ի համեմատ բնագիտության: Գ. Շպեյեր, մտորելով էմպիրիկ հենք ունեցող գիտությունների շարքում պատմության՝ ի համեմատ բնագիտության, նշանակալի առանձնահատկության մասին, հիմնավորությամբ հանդերձ առաջադրում է յուրապետակ մի տեսակետ: Մարդկության կյանքում վաղուց նկատելի է դարձել, որ պատմությունը՝ որպես այդպիսին, իր հայեցողության ու բովանդակության գիտական կայացման որպիսությանը հական նշանակալիություն կարող է բացահայտել հումանիտար բոլոր էմպիրիկ գիտությունների՝ որպես գիտություն գոյության ու կատարելագործվող կայացման համար: Ըստ Շպեյերի՝ պատմագիտությունն ունի հականորեն նշանակալի առանձնահատկություն, որի պարձառով և «հենց absolute պատմության մեջ (կարելի է) գրնել ամենարիպիկ ու պարզահայր արտահայտությունը իրականության կոնկրետ ճանաչողության առանձնահատկությունների»<sup>28</sup>: Բոլոր էմպիրիկ գիտությունների՝ իրականության էմպիրիկ ողջ ճանաչողության մեջ, ըստ նրա, պատմագիտությունը հարկ է ճանաչել կենտրոնական ու որոշակի դերում<sup>29</sup>:*

28 Шпет Г. История как предмет логики // Историко-философский ежегодник. М., 1988, с. 299.

29 Տե՛ս նույն տեղում:

«Եթե գիտությունը գնահատվի ոչ թե տեխնիկական կամ ընդհանրապես պրակտիկ իր օգտավետության, այլ իրականության՝ որպես և է, մաքուր ճանաչողության իդեալի տեսակետից, ապա առաջին տեղն ու ղեկավար դերը բոլոր էմպիրիկ գիտությունների մեջ պետք է գրավի ոչ թե վերացական ձևական գիտություններից որևիցե մեկը, այլ այն գիտությունը, որը կհանդիսանա կոնկրետի՝ իր անասման համայնության մեջ, առավել կատարյալ ճանաչողության օրինակ: Այդպիսի գիտություն կարող է լինել միայն **պարմությունը**»<sup>30</sup>: Ինչո՞ւ: «Պարմությունը նույնիսկ ամենամասնավոր իր թեմաներում գործ ունի կոնկրետ իրականության այնպիսի լրումի հետ, որի համար ֆիզիկականը, կենդանին և հոգեկանը միայն «մասերը» կամ «անդամներն» են»<sup>31</sup>:

Գ. Շպեյերը վիճարկում է իրականության կոնկրետ ճանաչողության խնդրակարգում էմպիրիկ գիտությունների առ բնագիտություն կողմնորոշումն ու կենտրոնական դերի ճանաչումը: «Ակնհայտ է, որ մեթոդի առումով պարմությունը պետք է փախչի իրականության կոնկրետ ճանաչողության օրինակ, քանզի այդպիսի ճանաչողության իդեալ չի կարող լինել իրականության լուծումը աշխարհի մեխանիկայի վերացական բանաձևերի շարքի մեջ: Այլ կերպ ասած՝ պարմությունը պետք է գրավի ղեկավար տեղ էմպիրիկ գիտությունների դասակարգության մեջ ոչ միայն ըստ այն հնարքների, որոնցից օգտվում է իրականությունն **ոստանասիրելիս**, այլև ըստ այն մեթոդների, որոնց դիմում է իրականությունն **պարկերելիս**, մեթոդներ, որ նպատակ ունեն աղեկավարորեն արտահայտել «այն, ինչ կա, որպես որ կա»: ... Տրամաբանությունը՝ որպես գիտությունների գիտություն, իր այն մասում, որը վերաբերում է էմպիրիկ գիտություններին, պետք է արմատականորեն վերանշակվի: XIX դ. առաջացած և մինչ այժմ դեռ գերիշխող համոզմունքին, իբրև թե էմպիրիկ գիտությունների փրամաբանությունը պետք է լինի բնագիտության փրամաբանությունը, մենք պետք է հակադրենք կատեգորիկ պնդում, որ **էմպիրիկ գիտությունների փրամաբանությունն ամենից առաջ պարմության փրամաբանությունն է**»<sup>32</sup>:

Աստ հարկ է ամրագրել, որ, քննելով մարդկային իրողություններ ու հասկանալով իսկությունը հայտող իմաստը և խորհրդածելով այդ իմաստը, մարդկային միտքը կարող է տեսանելիից անտեսանելիին անցում կատարել և վերստին խորհել աստվածայինը՝ նաև այլ ուղով ու հնարավորությամբ՝ **պարմությամբ**: Մտածողության խնդրո նյութ ունենալով պատմությունն ու խորհրդածելով պատմելին կամ պատմվողը՝ պատմաբանող միտքը (պատմիչի կամ ընթերցողի) կարող է վերընթանալ աստվածաբանության և ուրեմն հասնելով մտքի զորության կատարումին, խորհել անտեսանելի աստվածային իրողություններ՝ ըստ մարդկային կարողության իմանալիության չափավորության, հասկանալով իմաստ և իմաստություն և այդ հասկացման մեջ բացահայտելով իրենում խորհուրդ պահող ու իմանալի դարձնող իսկություն:

Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկում ներկայացվելով հայոց ինքնության, կյանքի ու մշակույթի նշանակալի եղելումի «իրաց և գործոց» իսկությունը հայտող իմաստների հասկացում ու մեկնողաբար բացորոշում՝ երբեմն՝ ուղղակիորեն, երբեմն՝ այլաբանորեն և երբեմն՝ զուտ

30 Նույն տեղում:

31 Նույն տեղում, էջ 300:

32 Նույն տեղում:

ակնարկով բացահայտվում և ընթերցող հոգուն ու մտքի հայեցողությանը, իմացությանն ու ներկրթությանը մատուցյալ է դառնում **աստվածայինի ներկայությունը հենց մարդկային իրողություններում**<sup>33</sup>: Ահավասիկ, այն ճշմարտությունը, որ «տեսանելին և–կամ իբրև թե տեսանելին» մտածող ու ներկայացնող պատմությունից միտքը կարող է կրթվել աճել ու հասանել անտեսանելի խորհրդածության ու բացահայտության, հասկանալի է դարձնում նաև վերոբերյալ միտքը, թե պատմությունն իր պատմողության առանձնահատկությամբ հոգեկրթական է և մարդկային մտածողության ամբողջական պոտենցիայի առումով՝ **նախնական կամ առաջնային գորություն**:

28. Իսկ ինչո՞ւ է պատմողությունը մարդկային մտածողության նաև **անզերծանելի գորություն** և մարդկային միտքը՝ որպես այդպիսին, էացնող ու այդկերպ էական առանձնահատկություն: Այս հարցի վերաբերյալ մտորելիս հարկ է նախ ամրագրել, որ հերմենևտիկական խորհրդածությունները սկզբունքորեն վերաբերում են նաև **եղելությունների իսկության նկատմամբ պատմողության հենց բացության աղեկվատության** հիմահարցին, և սկզբունքային, անհրաժեշտ ու հիմնարար այդ պայմանի իրագործմամբ միայն ընձեռնվող հնարավորությամբ է պատմությունը՝ որպես այդպիսին, իր գոյության մեջ ճշմարտությամբ կայանում և այդ հարցադրության անհրաժեշտությամբ ու նախընտրելիությամբ՝ կայանում նաև պատմության որպիսության ճշմարիտ քննությունն ու բացորոշումը:

**Ամենայն գոյի**, որում և **այս աշխարհի** ու **այս կյանքի** և հենց **գուտ մարդկային կյանքի իրողությունների** ու նաև **մշակույթի** նկատմամբ ընդհանրապես՝ մարդկային ուսումնասիրող մոտեցմանը և կոնկրետորեն՝ հայագիտությանը բնորոշ է **թեմայի պատմականացում**: Ջանազանելով հանդերձ՝ կարելի է ընդհանրացնել, որ մարդկության կյանքի եղելության իսկությանը նպատակամետ պատմությունը կամ պատմագիտությունը մարդկանց ազգերի ու նաև հայոց կյանքում ոչ միշտ նույնաբար ունեցել է էական նշանակություն: Ինչո՞ւ: Մասնագիտական գրականությունում այս հարցի առնչությամբ տրվել են բազմաթիվ պատասխաններ: Ինչ լրացուցիչ և, ըստ իս, հիմնորոշ պատասխանի կարելի է հասու լինել այս հարցով մտահայեցվող իմաստային տեսադաշտում:

Մարդկային ինքնության ու կյանքի՝ առ Աստված առիքնող բուն կոչման ու իսկության և ուրեմն իրենց իսկական գոյության պարագայում **մարդկային մտքի, խոսքի, գործի ու երկրեղեն բովանդակ կյանքի կատարումը պատմությունում կերպացյալ ու բովանդակյալ՝ իր իսկությունը հայտող իմաստով ու խորհրդով բուն իմաստությանն էացյալ՝ մատչում է համայնն իրենում ընդգրկող իրականություն և իմաստություն կենսագործում մարդկային կյանքում**: Ասվածը սկզբունքորեն ու ընդհանրապես վերաբերում է նաև ամենայն գիտության ու արվեստի և հատկապես հենց պատմությանը: Ահավասիկ, պատմությունը, իր ուսումնասիրության ոլորտում աշխարհի ու հենց մարդկային կյանքի եղելության ու ներկայի իսկությունը հայտող իմաստով ու խորհրդով իմաստնանալով,

33 Տե՛ս **Քոչարյան Ռ.**, Պատմության դիտավորությունը Ս. Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգում // Բանբեր Մատենադարանի, հատ. 19, Եր., 2012, էջ 132–140:

մարդկային բովանդակ կյանքից առ ինքն (առ մարդկային կյանք) բարի կենսարարության կարգավորությամբ նշանակալի այդ իմաստների ու իմաստության խորհուրդների՝ իրենում բովանդակյալ գիտությամբ մուտք է գործում ամենայն իրենում ընդգրկող իրականություն, կենսագործում և մարդկության կյանքում ժամանակակից ու ապագա ներկաներին ներկայակից դարձնում իմաստություն:

**Ուսումնասիրվող «խնդրո բանը» պայմանականացնող մարդկային մտքի հանրահատկության հետ մեկտեղ նաև հենց հայոց կյանքի առանձնահատկությամբ պայմանավորված՝ հայոց մշակութային կյանքում հատկապես հենց պատմ(ագիտ)ությունը առավելաչափ ու ավանդաբար ունեցել է կենտրոնական հանձնառություն: Հայոց կյանքում տեքստային մշակույթի գոյությունն առավելապես ակտուալացել է «պատմողական» կերպի մեջ: Ազգի ինքնագոյման խնդրառությունը անհրաժեշտություն էր դարձրել տեքստային ավանդության մեջ պատմավորող ուղղվածության կարևորումը: Եվ տեքստամշակույթի պատմավորող այս առանձնահատկությունն արդեն անհրաժեշտաբար իր վրա պետք է կենտրոնացներ քննողաբար խորհրդածող, հասկացման ու մեկնորոշման ձգտող միտքը: Ըստ իս՝ պատմագիտության և պատմափիլիսոփայության համար էականորեն նշանակալի խնդրակարգ է ներկայանում մշակույթի, որում և գիտության ու կոնկրետորեն՝ հայագիտության «պատմավորող ուղղվածության» գոյութենական ու նպատակաբանական իմաստի բացահայտումը:**

Տեքստամշակույթի առավելապես պատմողական կերպի մեջ կենսագործման այս պնդումն ամենևին էլ չի նշանակում, թե նրանում անհամեմատորեն եզակի կամ սակավ են **ոչ միանշանակորեն գիտական և-կամ գեղարվեստական պատմության** «պատում»-ային «պատմողականություն» իրենցում հայտող այն ստեղծագործությունները, որոնք ևս, իրենց գրական հյուսվածության յուրօրինակ կերպում «ի պահ», ամենայն «ընթերցասէրի» և «ուսումնասէրի» հասու են դարձնում նշանակալի իմաստ ու իմաստություն: Օրինակ, տեքստային հոգևոր մշակութային ավանդություն են տեսնվում նաև շարականները, աղոթքները, իմաստասիրական ու աստվածաբանական երկերը, որոնք, ունենալով իրենցում մեկնողական-պատմողական առանձնահատկություն, այնուամենայնիվ, իրենց ամբողջության, կնշանակի՝ խոսքային ու գրական հյուսվածության որակային որպիսության մեջ ներհայտելով **սկզբունքորեն պատմողական բնույթի մտակապակցվածություն**, այնուամենայնիվ, չեն տեսնվում որպես միանշանակորեն «պատմության» սեռին պատկանող ստեղծագործություններ:

Ասելով, թե հայոց մշակույթի գոյությունն առավել չափով իր իրագործումն է գտել «պատմողական» կերպի մեջ, նկատի ունենք և՛ ներքին, և՛ արտաքին ասպեկտները: Ներքին ասպեկտ ասելով, հասկանում ենք գրական ստեղծագործությունների, որոնցում նաև գիտական երկերի բովանդակության մեջ մտածողական որոնումի, այս առումով նաև որոնումն իրագործող մոտեցումի, ապա և մտքերի բխման, ամրագրյալ հյուսվածության (տեքստի) մեջ դրանց կապակցողական շարադրանքի այս կամ այնչափ հետևողականությամբ ու իսկությամբ պատմողական առանձնա-



հատկությամբ ու կարգով դրսևորվելը: Ներքին ասպեկտ ասվածը պատմողականությունը իմանալի է դարձնում իբրև մի վերագրություն, որը սկզբունքորեն հատուկ է մարդու մտածելու ներքին ու արտաքին ձևերին՝ որպես **ներքին տեսողությամբ իրերի վերաբերյալ բացահայտումներն իրենց ասան կերպի մեջ նույն այդ իրերին վերագրող ու կապակցողական կարգում կայացնող ու կարգավորություն հաստատող ունակային առանձնահատկություն:** Իսկ արտաքին ասպեկտ ասելով՝ հասկանում ենք տպագրությունների մեջ առավել ինտենսիվ հաճախականությամբ ու սովոր տպաքանակով պատմողական՝ գեղարվեստապատմողական կամ գիտապատմողական բնույթի երկերի՝ ամենքին մատչելի դարձնող հրատարակումների իրողությունը: Արտաքին ասպեկտը նկատելի ու հասկանալի է տալիս պատմողական բնույթի մտքի, երկերի և դրանցում՝ իմաստային հյուսվածությունների **առավել մատչելիությունը** մարդկային մտքի ընկալունակությամբ:

Մշակույթի գոյության առավել չափով «պատմողական» կերպի մեջ իրագործումը իր այդպես կայացումը պայմանավորող հիմք ունի մարդկային գոյության «ինչն» ու «ինչպեսը»՝ որպես այդպիսին, էացնող, մարդկային սեռի բնությունն ու ներկա գոյության որպիսությունը բաղկացնող չորս՝ **բանական և մահկանացու լինելության, մտածելու և գիտենալու** առանձնահատկությունները<sup>34</sup>:

Մարդկային **բանական** հոգու և մտքի կարողությունն է **մտածել ու իմաստ բացահայտել հենց կապակցողական եղանակով:** Եվ մարդկային **բանականության** այս կարողությունն առավելապես դրսևորվում է «պատմողական» առանձնահատկությամբ: Ասվածը կոնկրետացնելով՝ կարելի է ասել, որ հենց ինքը՝ **պատմությունը մասերից ամբողջի հյուսմանը կոչված միտք է:** Թեև աստ «պատմողականություն» (narrative) հասկացությունը հարկ է հասկանալ առավել համառոտ իր բովանդակությամբ ու ընդարձակ ծավալով, քան բուն պատմության պարագայում: Պատմողականությամբ է կայանում ամենայն բանավոր ու գրավոր լեզվական ստեղծագործություն: **Պատմողականությունը բանական-լեզվական կապակցվածության որոշակիորեն հետևողականությամբ շարադիր բացորոշությունն է:**

Մարդու՝ այս կյանքում **մահկանացու** բնությամբ պայմանավորված՝ անհրաժեշտորեն ու նաև նախընտրելի պիտոյականությամբ ծնունդ է առնում պատմությունը և նրա եռատեսակ՝ գիտական, գեղարվեստական ու առօրեական պատմությանը ներհատուկ **պատմողականությունը:** Կյանքի կոչվելով՝ պատմությունն ու գրականությունը ներկայանում են որպես մարդկային սեռի կարողությանը մատչելի **խկության փորձառություն,** ընդ որում պատմության պարագայում այդ փորձառությունը ներկայանում է նաև որպես հենց **խկության գիտություն:** Եվ կարելի է ամրագրել, որ **պատմությունը բովանդակ կյանքի եղելումն իր բուն խկությամբ էացնող մասերից ամբողջի հյուսմամբ իմաստավորող միտք ու տեսություն**

34 Հիշենք, որ մարդը սահմանվում է որպես կենդանի էակ՝ բանական, մահկանացու, մտածելու և գիտենալու (կամ հանճարի) ընդունակ (տես **Դաիթ Անյադթ**, Սահմանք իմաստափրություն, Եր., 1980, էջ 40, 44, 75):

**է:** Եվ պատմությունը, և՛ գրականությունը իրենց պատմողականությամբ կյանքի են կոչվում աշխարհի ու հենց կյանքի եղելություններում բովանդակյալ իմաստայինն ու հենց հոգևոր խորհուրդը այս կյանքի ժամանակահոս ու անցողիկ բնությամբ պայմանավորված անհետացումից ու կորուստից փրկելու, միայնաց ավանդելու և այդպերպ փոխանցմամբ անընդհատականություն ու նաև համայն մարդկության՝ նախնյաց, ժամանակակիցների ու սերունդների **իմաստությամբ հոգևոր միասնություն** ապահովելու համար: **Պատմությունը ժամանակահոս այս աշխարհի ու կյանքի անհետացող մասերն իրենց էական իմաստով ներկային կապակցող ու ապագային բարեկարգություն հնարավորող ամբողջը հասկացող ու մեկնորոշող խորհրդիմաց տեսություն է:**

Մասնագիտական գրականության մեջ առկա է մարդկայինը աստվածայինից տարանջատող և մարդկային **ինքնականությունը** նաև պատմության գոյացման և պրակտիկայում, և՛ տեսությունում հաստատագրող տեսակետ, ըստ որի՝ «անորոշ անցյալ»-ից լոկ պատմիչի մտագործունեությամբ կազմակերպվելով է գոյանում՝ ստեղծվում ու կազմահյուսվում «պատմական անցյալ» և հենց «պատմությունը» որպես այդպիսին<sup>35</sup>: Ի տարբերություն այս տեսակետի և դրանից բխող ու **պատմության գոյացման կամայածին բնույթը** հաստատագրող ինպիկացիայի՝ ըստ իս՝ ուսանելով Մովսես Խորենացու պատմագիտական իմաստուն փորձառությունից՝ հարկ է ամրագրել, որ պատմության պատմողականության դեպքում «բանական-լեզվական կապակցվածությունը» կապված է **իրական աշխարհի**, որում և մարդկային կյանքի, իրողությունները՝ որպես այդպիսին, կայացնող բուն «գորությունների» ու **լինելության «կարգավորությունների» փոխկապվածությունների հետ**՝ ներկայանալով որպես հենց դրանք հայտող «բանական-իմաստային կապակցվածություն»: **Պատմության պատմողականությունը իրական կյանքի եղելությունների կապվածության իսկությունը հայտող բանական-իմաստային կապակցվածության որոշակի հետևողականությամբ բանավոր կամ գրավոր շարադիր բացորոշումն է:** Իսկ գեղարվեստական երկում բանական-լեզվական կապակցվածությունը հենացյալ է **«երկի աշխարհի»** իրողությունների փոխկապվածությանը, դրանց իսկության նկարագրությամբ ու բացահայտմամբ՝ ունկնդիր կամ ընթերցող մտքին տեսադրելով ու ներկայավորելով ներկապակցյալ «երկաշխարհ»:

Պատմությունն իր՝ որպես այդպիսին (ըստ ինքյան) գոյության ու ամբողջականության մեջ, որակական իր որոշությամբ և հենց որպես իմաստ՝ կայանում է իրեն էացնող բաղադրիչ քայլերի **հաջորդականությամբ ու կապակցվածությամբ:** Եվ ընդհանրապես որևէ բան սկզբունքորեն իմաստ ունեցող կամ իմաստալից է ու որպես այդպիսին՝ մատչելի հասկացման ու ընկալելի, եթե այն կապակցված է, և այդ կապակցվածությունը՝ որպես այդպիսին, կայացյալ է բանական կցելիության ու ներհյուսության՝

35 Այդ տեսակետի ու նաև անգլալեզու գրականության մեջ կիրարկվող՝ “ambiguous past” և “historical past” հասկացությունների՝ որպես «տարտամ անցյալ» և «պատմական անցյալ» թարգմանության մասին տե՛ս **Ստեփանյան Ա.**, Պատմությունն իբրև տեքստ // Պատմություն և կրթություն, հատ. 1-2, Եր., 2005, էջ 9-22:

անհրաժեշտության, պատճառահետևանքային, մաս-ամբողջ և-կամ այլ կապատեղանակներով: **Միտքը, խոսքը կամ գործը իմաստալից են, եթե իրենցում ներկա, իրենց որպես այդպիսին էացնող և մարդկային իմացական կարողությանը ներհայտ ու մատչելի ունեն բանական որևէ կերպ կապակցվածություն:** Հակառակ դեպքում՝ նույնիսկ որպես հայտնի ժողովրդական խոսքի ձև, ասվում է, թե միտքը, խոսքը կամ գործողությունները անկապ են, ուստի և անիմաստ: Ասվածում էական է նաև «բանական որևէ կերպ կապակցվածության»՝ «մարդկային իմացական կարողությանը ներհայտ ու մատչելի լինելու» բացորոշումն ու սահմանագծումը, քանզի բոլորին է հայտնի և քիչ չեն դեպքերը, երբ այն, ինչը մի ոք, ըստ մարդկային իր կարողության, կապակցված ու իմաստալից է տեսնում ու հասկանում, մյուսը, ըստ յուրովի իր կարողության, կարող է և չտեսնել որպես այդպիսին, այլ, ընդհակառակը, տեսնել ու հասկանալ որպես անկապ ու անիմաստ: Կարելի է ամրագրել, որ **պատմությունն իր բաղադրիչ քայլերում իրագործվում է որպես եղելությունների իսկություն և խորհուրդ բացահայտող մտավոր տեսանություն և հենց միտք, խոսք և-կամ գիր:** Հարկ է նկատել, որ և միտքը, և խոսքը, և գիր-տեքստը որպես այդպիսին են ու հենց իրենց իսկական գոյության մեջ են՝ միմիայն իրենցում իմաստի ներկայության դեպքում, այլապես դրանցից յուրաքանչ-յուրն իր հերթին որակելի է որպես անիսկություն և անխորհուրդ, անկապ ու անիմաստ միտք, խոսք կամ գիր: Ի մի բերելով ասվածը՝ կարող ենք ասել, որ **պատմության իսկությունը բացահայտվում է որպես կյանքի եղելումը բաղկացնող իրադարձություններն ու մարդկային գործունեությունը ըստ մարդկային կարողության, ներքուստ կապակցող ու իմաստավորող և այդկերպ որոշակի ու ամբողջական գոյականության որակը բանավոր ու գրավոր հյուսմամբ ներքուստ կայացնող (ներկայացնող) իմաստություն:** Իսկ պատմության գիտական հետազոտության խնդիրն է բացահայտել պատմության, որում և դիտավորության, պատմվողի ու նրա միջոցով նաև նախընտրելի պատմելիքի, պատմումի հայեցակարգի, պատմվող եղելությունների իսկությունը հայտող իմաստները և, ավելին, նաև բացահայտել բոլոր դրանցում և-կամ դրանցով կենսականորեն ու մշակութային նշանակալի՝ հոգեկեցույց ու կենսարար, մարդկային ինքնության հոգևոր կեցողությունն ու համակեցությունը **կատարելագործվող առինքնության ու բարեկարգության** ուղղորդող ու նպաստավորող **խորհուրդների** ներկապակցվածություն, ամբողջականություն ու մեկ-միասնականություն հաստող **պատմության իմաստությունը:**

Պատմողական առանձնահատկությունը (պատմողականությունը) սկզբունքորեն բնորոշ է մարդկային **մտածողությանը** որպես այն էացնող, գոյացնող հատկություն: Հիրավի, ինչպես և վերը ակնարկվեց, կարելի է առանձնացնել՝ փոխզատորոշելով միմյանցից «պատմության պատմողականություն», «գեղարվեստական պատմողականություն» և «մտքի պատմողականություն»: Եվ աստ հարկ է ամրագրել, որ պատմողականությունը սկզբունքային իր ընդհանրականությամբ անպայմանորեն կապված չէ սյուժեի ու պատումի հետ: Այն իրագործվում է ամենայն մտքի բանաձևերում՝ աստվածաբանական, փիլիսոփայական, բնագիտական ու նույնիսկ

մաթեմատիկական հենաստիճաններում (աքսիոմաներում) ու մակաստիճաններում (թեորեմաներում)<sup>36</sup>, ինչպես նաև մարդկային մտքի՝ կապակցված ու որոշակի հետևողականությամբ շարադիր հենց առօրեական բովանդակությամբ արտահայտություններում:

**Մարդկային մտքի կոչումը գոյի՝ որպես այդպիսին, գոյությունը մտածելն ու իսկության՝ որպես իմաստ ու իմաստություն, բացորոշումն է:** Իսկ պատմողականությունը ներկայանում է որպես մարդկային իմացության ընթացքի ու հենց **գիտեցման** կարողությանն ու կերպին մատչելի սկզբունքային հնարավորություն: Ինչպիսին է մարդկային իմացության ու հենց գիտեցման կարողությունն ու կերպը: Իմացություն իրենում ներքուստ բովանդակյալ և արտահայտելու ունակ ու հենց արտահայտող միտքը, ինչպես նաև դրա բանավոր ու գրավոր ամենայն՝ բացահայտ և-կամ անբացահայտ համահյուսվածությունները սկզբունքորեն իսկ՝ որպես այդպիսին, կայանում են պատմողության՝ **մասերից որևէ ամբողջ կապակցող կարգով:** Վերոասացյալն ամբողջականացնելով՝ կարելի է ամրագրել, որ իմացականություն իրենում ունեցող միտքը, այսու նաև բանավոր ու գրավոր տեքստերը **պատմային են** և իրենց ներքուստ՝ որպես այդպիսին, իրագործող հնարավորություն ու կերպագործող սկզբունք ունեն **մասերից որևէ ամբողջ կապակցող և այդպիսով մարդկային բանական հոգու իմացական կարողությանը մատչելի ամբողջական իմաստի ու իմաստության հայտումը հնարագործող պայմողականությունը:** Մասից ամբողջի իմացականության ի գորու ու հետամուտ «ուսումնասէր» մարդկային մտքին և բանավոր կամ գրական հյուսմանը պատմողականությամբ հնարավորվում և որպես իսկություն բացահայտելի է դառնում **իրերի գոյացման ու լինելության կարգը:**

Նախկինում ակնարկվեց և աստ հարկ է նաև ընդգծել, որ իրերի (իրողությունների) ու գործերի բնության կամ, այլ կերպ ասած, իրերի՝ որպես այդպիսին, գոյության իսկության՝ որպես իմաստ և իմաստություն բացահայտումը, ինչին ի գորու է, այսինքն՝ ունի պոտենցիա և կոչված է պատմողական միտքը, դեռ սոսկ **իրերի գոյության կարգի** բացահայտման իրագործմամբ կլինի անկատար: **Պատմողականությամբ իրերի ու գործերի որպես այդպիսին գոյության իսկության բացահայտման և այսու իմաստության ուղղորդված մարդկային միտքը (որ և կնշանակի՝ պատմողական միտքը) կոչված է և ըստ այդմ ի գորու ու հենց հետամուտ բացահայտելու իրերի ու գործերի գորությունը, որ և ներկայանում ու իմանալի է դառնում՝ այդ իրերի ու գործերի որակային որոշությունը՝ որպես այդպիսին, կայացնող գորություն:** Մոլվես Խորենացին իր «Պատմութիւն Հայոց» երկում հայոց կյանքի նշանակալի եղելում իրադարձությունների, գործերի ու կենցաղավարության կարգավորության իսկության հասկացմանն ու մեկնողաբար բացորոշմանը հետամուտ, «ընթերցասէր» և «ուսումնասէր» ժամանակակիցներին ու հետագա

36 Հայերենում մաթեմատիկական այս տերմինների ճշգրիտ թարգմանությունը մաթեմատիկոս ու հրաշալի տրամաբան, գիտնական և դասախոս սահակմեսրոպյան սուրբ գործին, երագանքին ու հայոց սերունդներին հղված ավանդին նվիրյալ, իմ ավագ ընկեր, վաղաժամ հանգուցյալ Աշոտ Մաշուրյանինն է:

սերունդների «մտաց աչաց» է «յանդիման կացուցանում», ասել է թե **իմաստագետ և դրանում նաև խորհրդագետ** խոսքով («բանի») ու գրով կերպարանավորում կամ պատկերավորում «իրաց և գործոց» եղելության «կարգը» և «գորութիւնը»՝ «զպատճառս և զգորութիւն իրացն միայն յայտնելով, և զերկարութիւն գործոյն համառոտ բանի յանդիման կացուցանելով»<sup>37</sup>:

Ի մի բերելով վերոասացյալը՝ կարելի է կարճառոտ սահմանել, որ **պատմությունը մտածողության առ իսկությունն ու իմաստությունն ներկապակցությունն է**: Մանրամասնորեն բացորոշելով՝ կարելի է հաստատագրել, որ **պատմությունը ներկայանում է որպես գոյի գոյությանը և հենց համաշխարհի ու մարդկային կյանքի եղելությանն առնչվող մարդկային մտածողության առ իսկությունն ու իմաստությունն ընթացքի ներկապակցություն**: Եվ պատմությունը որպես պատմողականություն և, ուրեմն, որպես մտքի առ իմաստությունն ընթացքի ներկապակցություն իրենում ու իրենով բովանդակում է պատմությունը որպես հենց պատմողությամբ ասելիք:

29. Հարկ է նաև ամրագրել, որ ընդհանրապես պատմությունը և կոնկրետորեն Խորենացու «Հայոց պատմությունը» իրենում հասկացյալ ու մեկնորոշյալ «ասելիքի» բազմաբովանդակ նշանակությամբ **և՛ հոգեկրթական, և՛ կենսակրթական է**: Եվ պատմությունն ի տարբերություն այլ գիտությունների՝ այս առումով ունի մի յուրահատկություն ևս: Աշխարհի, որում և մարդկային ինքնության ու կյանքի, իրապես տեղի ունեցած եղելությունը՝ որպես այդպիսին, կայացնող գորությունն ու կարգը, ըստ մարդկային կարողության, հասկանալով ու մեկնողաբար բացորոշմամբ պատմելով այնպես, որ պատմվողի դիտավորության բացությանը համաբացորեն հասկացման ձգտող ամենքին իմանալի դառնա այդ եղելության իսկությունը, **պատմությունը «ընթերցասէր» և «ուսումնասէր» յուրաքանչյուրին ուսուցանում և ներկրթությամբ՝ ուսյալ ու կիրթ հոգի, միտք ու կենսակերպի է կոչում, կերպարանմանն ու կատարումի ուղղորդում ու կատարելագործում օրինակով**: Խորենացու երկում պատմությունը, **ձեռքբերովի առաքինություններով**<sup>38</sup> պատճառյալ, մարդկային և կոնկրետորեն հայոց ինքնության, կյանքի ու մշակույթի առավելությունն ու բարեկարգ կենսահաջողությունն իմացահայտելով, ուսուցանում ու հոգևոր-քաղաքակիրթ գոյության է կոչում հայոց նախնյաց «խորհրդոց և գործոց» առաքինուսույց օրինակներով: Հնուց ավանդված ու նաև ժամանակակից ամենայն պատմությունների առնչությամբ մտորումներում հնարավոր է գուցե մտածել, թե նախնյաց կյանքից որևէ բան և-կամ ողջ անցուղարձը պատմության մեջ հիշատակման արժանի է դիտվում արդեն իսկ այնքանով, որ այն եղել է, և այդ եղելության փաստն անհնար է անտեսել, ժխտել ու չեղյալ համարել՝ աչք փակելով և-կամ հայացք թեքելով: Սակայն արդյո՞ք պատմելու արժանի կարելի է տեսանել ողջ եղելությունը

37 Խորենացի Մ., Պատմութիւն Հայոց, Եր., 1991, էջ 45:

38 Առաքինությունների տիպաբանության և մարդկային ինքնության ու կենսակերպի՝ ձեռքբերովի առաքինություններով իսկ պատճառագետ ու իմաստուն ներկրթության մասին տես Գալիթ Անյաղթ, Սահմանք իմաստասիրութեան, Եր., 1980, էջ 71-72:

սոսկ այն հիմնավորությամբ, որ այդ բոլորը եղել է, թե՛ հարկ է պատմել էականը, նշանակալին, մարդկային ինքնության ու կյանքի իմաստուն ու բարի գոյության համար կենարար նշանակալիությամբ նախընտրելին: Մովսես Խորենացին իր երկում և՛ բուն պատմության շարադրանքում, և՛ տեղ առ տեղ Սահակ Բագրատունուն ուղղված իր խոսքում բազմիցս նշում է, որ անցյալում կատարված ոչ ամենայն ինչ է նշանակալի ու արժանի տեսնում իր պատմության մեջ հիշատակման: «Պատմութիւն Հայոց» երկի ուսումնասիրությունը նկատել է տալիս, որ նրանում պատմվողի և որպես «ինչ» կացուցանման, և՛ պատմողության «ինչպես» կարգավորությամբ շարակցման ու նաև արտաքնահարդարման մեջ կայացյալ է և կանա թե ակամա գրին «ի պահ» հանձնված՝ **մարդկային, որում և հայոց կյանքի անթաքշությունը յուրովի նշանակալիություն էացնող իսկություն:** Ընդ որում այդպիսի եզրահանգումը հնարավոր է նաև ընդհանրացնել միջնադարյան հայ պատմիչների երկերի նկատմամբ: Եվ այդ ամենը նրանց երկերում իրագործված է հասկացման ու մեկնաբանության՝ վերջինիս ուղղակի ու բացորոշ և-կամ անուղղակի պատմողական ակնարկով, այդպես մեկնորոշմամբ՝ ընթերցասեր ու իմաստության ուսումնասեր ժամանակակիցների ու սերունդների հասկացման սիրո քննությանն ընձեռելով սկզբունքորեն իմաստության հնարավորություն ու երբեմն նաև հասկացմանը նպաստավորող աջակցություն, հենց այդպիսի առիքնող կերպորինակ նկատելով Մովսես Խորենացու պատմական երկը: Մասնավորապես նրա պատմության մեջ պատմելին, ընթերցողի կողմից իր հասկացման համար ամենաէական կարևորությամբ՝ քննողաբար հասկացված ու մեկնորոշված է պատմագիտական որոշակի ու ամբողջական հայեցակարգով, ըստ մարդկային կարողության ու առձեռն հնարավորության:

Միջնադարյան հայ պատմիչների և կոնկրետորեն Մովսես Խորենացու պատմագիտությունը, սակայն, չի ներկայանում որպես զուտ դեպքերի պատմություն, այլ իրեն ինքնահասկանում ու իմաստավորում է որպես բուն իմաստների պատմություն: Հայ միջնադարյան պատմագիտությունը բազում աշխատություններով և հատկապես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկով, որոնցում և ըստ մարդկային կարողության այս կամ այն չափ ընդգրկմամբ ու գիտությամբ միշտ պատմել է **նշանակալի իրադարձություններ**, որոնք որպես այդպիսին էին իրենցում կայացյալ իմաստային բովանդակությամբ և այսպիսով պատմել է **էականորեն նշանակալի իմաստային բացահայտություններ:** Միջնադարյան հայ պատմագիտության՝ որպես այդպիսին, գոյության պոտենցիայի և իրագործվածության հասկացման ու մեկնորոշման խորհրդածություններում Մովսես Խորենացու պատմագիտությունը որպես նրան հարացույց նկատելու հնարավորության տեսադաշտում միտքը բանաձևելով՝ կարելի է ասել, որ հայ պատմագիտության սկզբունքային դիտավորությունն է այդ բացահայտումների իմաստավորությամբ ընթերցողի մտքին ու խորհրդածությանը մատուցել կյանքի մեջ տեղի ունեցած, կենսագործված և-կամ մարմնացյալ **ոգեղենություն** և այս առումով **կորցրած կամ իրագործված հնարավորություն, կյանքում իմաստության հոժարակամության, ընտրության ու կատարումի նվազություն կամ առավելություն:** Նրանց պատմագի-

տությունը կոնկրետ պատմություններում այդ ամենի հյուսման և ընթերցող հետնորդներին ի իմաստացում հղման մեջ է հասկացել իր գոյության իմաստավորությունը հիմնող ու կատարումի բերող, մարդկային կարողության համար հնարավոր ու իրենում իսկ արդեն ինքնաբավ՝ պատմության նշանակությունը, նախընտրելի դիտավորությունն ու նաև մերձավոր կամ մերձակից համայն դիտավորության բոլորումը:

30. Մովսես Խորենացու պատմահայեցակարգին բնորոշ առանձնահատկություն է նաև այն, որ **այս կյանքի՝** ամենայն ու կոնկրետորեն Պատմահոր **ներկայի բնույթով ու հոգևոր՝ ժամանակի մեջ ունիվերսալ կարիքով** և հենց այդ կարիքի **հոգացության** խնդրակարգի ու պատմական հետաքրքրության, գիտական որոնումի ու հասկացման **իմաստային տեսադաշտում** անհատի, ազգի, մարդկային հանրության ու ողջ մարդկության անցյալն ու ներկան՝ կյանքի նախկին ու նաև ներկայում շարունակական եղելումը, մտահայեցվում, հասկացվում ու մեկնորոշվում է որպես **նշանակալի անցյալ ու ներկա:** Եվ անմիջականորեն ապրված կյանքի անցյալը, մարդկային ինքնությանը որոշաչափ ներկայանալով հիշողությամբ, իր առավելաչափ ընդգրկմամբ ու նաև չապրված անցյալն իր նշանակալի եղելությամբ ներկայանում է պատմությամբ: Ահավասիկ, **մարդկային, որում և ազգային, ինքնության, կյանքի ու մշակույթի ներկատարելագործվող և բարենշանակորեն կարգավոր գոյության խնդրի տեսակետից՝ անցյալը իրենում կերպարանյալ ու բովանդակյալ խորհրդով հենց պատմությամբ ավանդյալ և, ուրեմն, ինքը՝ պատմությունը մեր նկատմամբ ի հայտ է բերում նշանակություն և դառնում մեկնաբանության թեմա:**

Աշխարհում ու կյանքում ամենայն տեղի ունեցածում կերպարանյալ իդեան, հոգևորը կամ իմաստը **պատմվելով, ձեռք է բերում պատումի մեջ ներկայություն՝ մեկնահայտելով աշխարհի, որում և մարդկային կյանքի իսկություն և-կամ անիսկություն:** Աշխարհն ու կյանքը պատմության մեջ վերակերպվում են իմաստի և պատմությամբ, որում և, ըստ Վ. Դիլթայի, «վերապրումով» կյանքը ոգեղենանում է՝ **ձերբագատվելով նյութեղեն իր սուբստրատից**<sup>39</sup>:

Կարելի է նկատել, որ **մարդկային լեզուն իսկ իրենում և-կամ իրենով ողջ համաշխարհի ու նաև մտացածին հնարավորի, որում և մարդկային երևակայությամբ ու մտքը հորինյալ «հնարավոր աշխարհի» հասկացություն, որում և հասկացվածություն ու մեկնություն է, անշուշտ, ամենայն իր տարրերում կամ արտահայտություններում մասամբ կամ լիովին ոչ զուտ ճշմարիտ:** Աստ չի ասվում, թե լեզուն աշխարհի հենց ճշմարիտ հասկացությունն է, որում հասկացյալն իրենում և-կամ իրենով հայտում ու մարդկային բանական հոգուն ու մտքին յանդիման կացուցանում և ներկա է դարձնում աշխարհի իսկությունը: Քանզի մարդկային լեզվում ամբարյալ են և՛ թերհասկացումը, և՛ թյուրհասկացումը, և՛ ստույգ

39 Վ. Դիլթայի հայեցակարգում պատմիչի պարագայում կյանքից անմիջականորեն ապրումով և նախնյաց ու այլոց պատմամշակույթից վերապրումով, իսկ ընթերցողի պարագայում պատմիչների կողմից արդեն ստեղծյալ ու ավանդյալ պատմամշակույթից վերապրումով կայացող հասկացմամբ ու մեկնորոշմամբ (որ և կնշանակի՝ մշակույթով) կյանքի ոգեղենացման մասին համառոտ տես **Քոչարյան Ռ.**, «Բաց հերմենևտիկայի» ֆենոմենը փիլիսոփայական հերմենևտիկայում (Վ. Դիլթայ) // Փիլիսոփայությունը Հայաստանում 21-րդ դարի շեմին, Եր., 1998, էջ 53:

գլխելիքը, դրա հետ մեկտեղ՝ և՛ գռեհիկը, և՛ անեծքը, և՛ օրհնությունը: Իսկ պատմությունը իրենում պատմվող աշխարհի, որում և մարդկության ինքնության, կյանքի ու մշակույթի էական եղելումի հասկացություն ու մեկնություն է, իմաստ և բուն հոգևորություն՝ հղված ի ներկայություն հասկացման ձգտող, իմաստության, քաջության և ամենայն առաքիճության ու բարեկարգության ուսումնասեր, հեղինակին ժամանակակից ու նաև ապագա ընթերցողին: Պատմությունն ընդհանրապես իր բնույթով մեկնողական է, իսկ պատմության մեկնությունը, կողմնորոշվելով Ս. Հովհան Որոտնեցու բանաձևով, որ նա տալիս է Արիստոտելի «Յաղագս մեկնութեան» աշխատության վերաբերյալ, **մեկնության մեկնություն է**<sup>40</sup>:

31. **Մշակույթի տեքստի և մարդու փոխհարաբերակցության իրադրությունն իրենում ունի սկզբունքորեն կոչում ու հնարավորություն և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում նաև առիթ է՝ մարդկային ինքնությունն ու կյանքն առավել կատարելությամբ իմաստուն ու բարի, միով բանիվ՝ առաքինի ու հենց բարեկարգությանն առիթնող կայացման:** Մշակույթային տեքստի և մարդու փոխհարաբերակցության իրադրությունը, ըստ իր կոչումից բխող անհրաժեշտ ու նաև նախընտրելի պիտոյականության ուղիով կատարելագործվող ազատության, նշանակում է, որ մարդը կարիք ունի ինքն իր նկատմամբ որոշակի ջանքի գործադրության՝ իրենը, կամայականը զսպելու և իր կամքը, իրեն հաճելին, հարմարն ու ընտելականը չպարտադրելու հաղորդվողին: Պատմությամբ ասվողի հասկացման հերմենևտիկական իրադրությունում հարկ է ոչ թե ինքնականությամբ բռնանալ ու տեքստով ասմամբ իրեն հայտնվողը փոխել, այլակերպել (իմա՝ ինքնակերպել), այլ հայտնվողի ու իր միասնացող, ուստի և յուրաքանչյուրի համար ավելի ընդարձակ տեսադաշտում (հորիզոնում)<sup>41</sup> **տեքստով իրեն հղված ասման և-կամ ասման մեջ հայտնվողի դիմաց** արդեն իսկ իրենում տեսանվող, բացահայտվող նշանակությունն ընկալել և հենց այդպես հասկանալ՝ ի միտ և ի կյանս առնել, փոխվել ու իմաստնանալ:

Ինչպես տեսնում ենք տեքստում, մշակույթում պահված իմաստների ընկալումն ամեննին էլ պարզունակ և ինքնին ակնհայտ բան չէ: Այդ իմաստները բացահայտելու, ընկալելու համար, անհրաժեշտ է **հասկացում ու մեկնություն: Եվ այդ հասկացման ու մեկնության տեսականացումն ու տեսությունը հերմենևտիկան է՝ անտիկ շրջանից ի վեր մինչև ժամանակակից փիլիսոփայական հերմենևտիկա՝ իր հայեցակարգային կայացման փորձառությամբ:** Ի մի բերելով վերոասացյալը՝ կարելի է առավել բացորոշությամբ սկզբունքորեն ամրագրել, որ **պատմության հետ իր ներքին փոխհարաբերակցության մեջ հերմենևտիկան հիմնադրում, աղեկվատորեն կայացնում, կատարելագործում և հենց անհրաժեշտ ու նախընտրելի կատարումի պսակին է հասցնում պատմության՝ որպես այդպիսին գոյության, իսկությունն ու այն հայտորոշող իմաստն ու իմաստությունը:**

40 Հովհան Որոտնեցու այս բնորոշման մասին մանրամասն տե՛ս Մինայան Ա., Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերի Հովհան Որոտնեցու մեկնությունները // Աշխատություններ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի, պր.1, Եր., 1988, էջ 73:

41 «Հորիզոնների» միախյուման գաղափարյան դրույթի մասին մանրամասն տե՛ս Քոչարյան Ռ., Հանս-Գեորգ Գադամերի փիլիսոփայական հերմենևտիկան, Եր., 2006, էջ 145-149:



## Summary

### INTERPRETIVITY OF HISTORY AND THE HISTORICAL-SCIENTIFIC CONCEPTION OF MOVSES KHORENATS'I

Part 2: History as the interconnection of thought-process towards  
truth and wisdom

Romik Kh. Kocharyan

**Key words** – history, historical-scientific conception, philosophy of history, hermeneutics, interpretation, truth.

This paper presents the problematic of understanding and interpretation in the realization of the genuine destination of history and, thus, in the being-of-truth of history. Understanding and interpretation are necessarily interwoven in the being of history as such. Into this problematic are necessarily and preferably involved both the historian author – during all stages of his history-creation (selecting and collecting historical material, research and exposition) and the reader – in his perusal relatedness with the historical text. In the historical-scientific conception of Movses Khorenats'i **history is the understanding and interpretation of the genuine sense (meaning) and spirituality of the narrated in itself essential and significant bygone or yore of the world and in it also of mankind's self-identity, life and culture**, and as such it is a message to a “reading-lover” striving for understanding wisdom, valiance and heroism, every virtue and good-orderliness. And **in its inner interrelation with history hermeneutics builds the foundation, forms the adequate construction, improves and leads to the completion of its necessary and preferable fulfillment the truth of the being of history as such and the sense, which reveals that truth.**

## ИНТЕРПРЕТАТИВНОСТЬ ИСТОРИИ И ИСТОРИКО-НАУЧНАЯ КОНЦЕПЦИЯ МОВСЕСА ХОРЕНАЦИ

Часть 2: История как внутренне-связанность мышления в  
движении к истине и мудрости

Ромик Х. Кочарян

**Ключевые слова** – история, историко-научная концепция, философия истории, герменевтика, интерпретация, истина.

В статье представлена внутренняя связь истории и герменевтики – проблематика и свершение понимания и истолкования в призвании и становлении истины истории. **Понимание и истолкование необходимым образом вплетены в бытие истории.** С этой проблематикой необходимо и предпочтительно должным образом сталкиваются и историк во всех этапах своего историотворчества (выбора и собирания исторического материала, исследования и изложения), и читатель в своем прочтении исторического текста. В историко-научной концепции Мовсеса Хоренаци **история – это понимание и истолкование, подлинный смысл и духовность в себе самой рассказываемого мира и в нём – существенного события человеческой самости, жизни и культуры,** и в таком качестве она также посыл и духовное присутствие к пониманию и благозначимое жизне- воплощению стремящемуся читателю – учелюбу мудрости, доблести, всякой добродетели и благопорядка. И в своей внутренней взаимосвязи с историей герменевтика основополагает, адекватно конструирует, совершенствует и ведёт к венцу своего необходимого и предпочитаемого свершения истину и её же выявляющий смысл бытия истории как таковой.